

ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ №356

2021 թվականի 13 հուլիսի

ք. Թբիլիսի

Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021 – 2030 թվականների պետական ռազմավարության ու քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021 – 2030 թվականների պետական ռազմավարության 2021 – 2022 թվականների գործողության ծրագրի հաստատման կապակցությամբ

Հոդված 1

«Վրաստանի կառավարության կառուցվածքի, իրավասության եւ գործունեության կարգի մասին» Վրաստանի օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, հաստատվի կցված.

1. Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021 – 2030 թվականների պետական ռազմավարությունը (**Հավելված 1**):
2. Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021 – 2030 թվականների պետական ռազմավարության 2021 – 2022 թվականների գործողությունների ծրագիրը (**Հավելված 2**):

Հոդված 2.

Որոշումը կկիրարկվի հրապարակման պահից:

Վարչապետ

Իրակլի Ղարիբաշվիլի

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ
2021-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

I. Ներածություն.....	4
Ռազմավարության առաջնահերթություններ.....	8
Ռազմավարության մշակման մեթոդաբանություն.....	9
II. Ռազմավարության իրավական շրջանակ.....	13
II. Իրավիճակի տեսություն.....	15
IV. Ռազմավարության երկարաժամկետ տեսլական, առաքելություն և արժեքներ.....	41
V. Ռազմավարության առաջնահերթություններ, նպատակներ և խնդիրներ.....	43
Ռազմավարական առաջնահերթություն 1 – պետական լեզուն՝ ինտեգրման աջակցության համար.....	43
Ռազմավարական առաջնահերթություն 2 – որակյալ կրթության մատչելիություն.....	46
Ռազմավարական առաջնահերթություն 3 - հավասար, քաղաքացիական և քաղաքական մասնակցություն.....	49
Ռազմավարական առաջնահերթություն 4 – սոցիալական և տնտեսական ինտեգրում.....	56
Ռազմավարական առաջնահերթություն 5 – միջմշակութային երկխոսություն.....	60
VI. Ռազմավարության իրականացում, մոնիթորինգ եվ գնահատում.....	62

I. ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի իշխանության գերագույն նպատակը՝ երկրի ժողովրդավարական զարգացումը, սոցիալ-տնտեսական հզորացումը և եվրոպական ու եվրատլանտյան ինտեգրումը, հիմնվում է մարդու հիմնարար իրավունքները առօրյա կյանքում իրացման գաղափարի և հավասարության և իրավահավասար հասարակությունների կառուցման սկզբունքների վրա: Համապատասխանաբար, Վրաստանի կառավարությունը որպես երկրի բազմազգ և մշակութային բազմազան հասարակության ուժեղացման կարևորագույն առաջնահերթություն քննարկում է քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականության արդյունավետության շարունակելի բարձրացումը: Այս ուղղությամբ իշխանության նպատակները կողմնորոշված են բազմակարծիքության (պլյուրալիստական) և ինկլյուզիոն քաղաքականության անցկացման ճանապարհով միասնական, կայուն, իրավական և բազմամշակութային հասարակության հաստատմանը, որի գլխավոր արժեքը մարդն է և նրա իրավունքները:

Վրաստանում բնակվող տարբեր էթնիկ նույնականություն կրող բնակչությանը միմյանց հետ կապում է հանդուրժողականության, խաղաղ և համերաշխ համակեցության բազմադարյա պատմությունը: **Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական քաղաքականությունը** նախատեսելով այս հանգամանքները, շարունակում է նշված ավանդույթն և փորձը, հավասարության սկզբունքները և հիմնվելով ընդհանուր եվրոպական արժեքների վրա, պետական քաղաքականության շրջանակներում հզորացնում է այն: Իշխանությունը մշակութային բազմազանությունը և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ավանդը երկրի կայուն զարգացման գործընթացում դիտարկում է որպես կարևորագույն գործոններից մեկը: Որպես պետական քաղաքականության կողմնորոշում հայտարարված է էթնիկ փոքրամասնությունների լիարժեք ինտեգրումը, մշակութային բազմազանության օժանդակումը, արդարացի, անվտանգ և հանդուրժողական միջավայրի հաստատումը, որպեսզի զարգանա այնպիսի հասարակություն, որի յուրաքանչյուր անդամը ապրի արժանապատվությամբ և օգտվի ժողովրդավարական կառավարման առավելություններից, ունենա հավասար իրավունքներ, կարողություններ և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք ընդգրկման պայմաններ: Համապատասխանաբար, յուրաքանչյուր քաղաքացի, անկախ իր էթնիկ, թե մշակութային պատկանելությանը, դիտվում է որպես հզորության աղբյուր և արժեք:

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ապահովումը երաշխավորված է Վրաստանի Սահմանադրությամբ, միևնույն ժամանակ այն միջազգային մեխանիզմների և պայմանագրերի շրջանակներում երկրի կողմից ստանձնած դրական պարտավորություն է, որը կողմնորոշված է ոչ միայն համապատասխան օրենսդրական տարածքի ստեղծման, այլև

իրատեսական կյանքում իրավունքների իրականացման օժանդակության վրա: Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականությունն իրականացվում է սահմանադրական և միջազգային չափորոշիչների, սկզբունքների և նորմերի հիման վրա: Հավասարությունն և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ապահովված է Վրաստանի օրենսդրությամբ և համապատասխան մեխանիզմներով:

Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը համակարգում է քաղաքացիական հավասարության և ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականության մշակումը, իրականացումը և հաշվետվությունը: Պետական քաղաքականության հիմնական մեխանիզմ է ներկայացնում քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և համապատասխան գործնական ծրագիրը:

Վրաստանի կառավարությունը, Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությամբ և համակարգմամբ, մշակեց սույն **«Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարությունը և գործնական ծրագիրը»:** Ռազմավարության շրջանակներում, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ոլորտում միջգերատեսչական, բազմասեկտոր, միասնական և հաջորդական քաղաքականության ստեղծման և անցկացման նպատակով, սահմանված են երկրի երկարաժամկետ առաջնահերթություններն և խնդիրները, որոնք կնպաստեն գործընթացների համակարգված և արդյունավետ ուղղորդմանը, էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը և աջակցության ուժեղացմանը, քաղաքացիական հավասարության վրա հիմնված հասարակության հաստատմանը և միջազգային ընկերակցության առջև ստանձնած դրական պարտավորությունների կատարմանը:

2021-2030 թվականների պետական ռազմավարությունը երկրի քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման սահմանած թվով երկրորդ ռազմավարական փաստաթուղթն է: Ռազմավարական ծրագրմանը նախորդեց **«Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և 2009-2014 թվականների գործնական ծրագիրը»**, Վրաստանի կառավարության **«Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ռազմավարությունը և 2015-2020 թվականների գործնական ծրագիրը»**, որոնց մշակումը դրեց քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականության համակարգային կառավարման ինստիտուցիոն զարգացման հիմքը: Ստեղծեց համապատասխան մեխանիզմներ և էթնիկ փոքրամասնությունների հնարավորությունների ընդարձակման տեսանկյունից կատարեց կարևոր քայլեր, դինամիկորեն աշխատանքն ուղղորդեց առկա մարտահրավերները հաղթահարելու և ձեռքբերումները բարելավելու համար:

Սույն պետական ռազմավարությունը հիմնված է վերջին տարիներին քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ոլորտում ձեռք բերված արդյունքների վրա և նկատառվում են գոյություն ունեցող մարտահրավերները, որոնք նույնականացված են 2015-2020 թվականների ռազմավարության միջանկյալ և վերջնական գնահատումների արդյունքում, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդատուների կոմիտեի կողմից Վրաստանի առնչությամբ հրապարակված եզրակացություններում և տեղական ոչկառավարական կազմակերպությունների հետազոտություններում: Նշված գնահատումների շրջանակներում ներկայացված հանձնարարականները քննարկվեցին և նկատառվեցին սույն ռազմավարության մշակման գործընթացում: Պատրաստվեց հիմք հաջորդ տարիների ռազմավարական նպատակների որոշման և համապատասխան երկարաժամկետ և կայուն արդյունքով հաշվարկված խնդիրների ձևավորման համար և ստեղծվեցին դրանց կատարման մեխանիզմներ:

Ռազմավարությունը հիմնվում է ժողովրդավարական և իրավական պետության հզորացման տեսլականի վրա, որը ենթադրում է բոլոր քաղաքացիների իրավահավասարություն օրենքով և օրենքի առջև, հանդուրժողական և ինկլյուզիոն միջավայրի ամրապնդում, որտեղ բոլոր քաղաքացիներն ապրում են արժանապատվորեն և անվտանգ, լիարժեք մասնակցում հասարակական կյանքին: Երկրի մշակութային բազմազանությունը և հավասարությունը որպես գլխավոր արժեքներ և ժողովրդավարական զարգացման կարևորագույն ռեսուրս, ոչ միայն ճանաչված են, այլև այս հարցերի շուրջ փոխհամաձայնությունը ձեռքբերված և փոխանակված է լայն հասարակությունում:

Սույն **ռազմավարության նպատակն** է պետությունում քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման հետագա ամրապնդումը, ինչը ենթադրում է երկրում միջերևիական հարաբերությունների ուժեղացում, նրանց մշակութային արժեքների և նույնականության պահպանում, հասարակությունում իրավահավասարության սկզբունքների լիարժեք իրացում, որպեսզի Վրաստանի բոլոր քաղաքացիները, առանց էթնիկ ծագման խտրականության, կարողանան իրենց ներդրում ունենալ երկրի տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքում և ժողովրդավարական զարգացման գործընթացում:

Այս նպատակին հասնելու համար ռազմավարությունում նախատեսված է երկրի առաջընթացը վերջին տարիներին քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ուղղությամբ: Փաստաթղթով որոշված նպատակները և խնդիրները մշակվել են միասնական ազգային շահերի և մարդու հիմնական իրավունքների և ազատությունների նախատեսմամբ, համապատասխանության մեջ են բարձր միջազգային սկզբունքների և չափորոշիչների հետ: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, նույնականության պահպանության և ազգային մշակութային զարգացման համար նախատեսված են այն կարիքները և արժեքները, որոնք կիսում են տարբեր էթնոսի ներկայացուցիչները:

Էթնիկ նույնականությունը ենթադրում է էթնիկ խմբերին բնորոշ ժառանգության բաղկացուցիչ խորհրդանշանների՝ լեզվի, մշակույթի, ավանդույթների պահպանություն, վերաարժեքավորում և անհատի կողմից դրանց նույնականացում:

Սույն փաստաթղթի շրջանակներում **քաղաքացիական իրավահավասարությունը ենթադրում է** յուրաքանչյուր քաղաքացու համար, չնայած նրա էթնիկ կամ այլ պատկանելության, պատվավոր կյանքի պայմաններ, երբ անհատը, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների և նորմերի, Վրաստանի Սահմանադրության և օրենսդրության հիման վրա, պաշտպանված է ցանկացած ձևի և բովանդակության խտրականությունից, հավասար է օրենքի առջև, ապրում է հանդուրժողական միջավայրում, ունի հավասար իրավունքներ և հնարավորություններ այնպես, ինչպես հավասար պատասխանատվություններ և պարտականություններ: Ունի նաև սեփական կարողունակությունը լիարժեքորեն իրացնելու, մայրենի լեզվից օգտվելու, էթնոմշակույթի պահպանության և զարգացման հնարավորություն:

Քաղաքացիական ինտեգրումը ենթադրում է երկրում բնակվող բոլոր էթնիկ ծագման քաղաքացիների բազմազգ հասարակությունում ինկլյուզիան, ինչը նախատեսում է նրանց ակտիվությունը հասարակական-քաղաքական կյանքում, պետության հետ ամուր դրական հուզական կապի ձևավորման և նույնականության ու պատկանելության ապրումների ստեղծում-ուժեղացում:

Այս նպատակով պետության պարտականությունն է ապահովել ինկլյուզիոն և հավասար հասարակության կառուցման և քաղաքացիների լիարժեք մասնակցությանը համարժեք պայմանների և մեխանիզմների ստեղծում, ինչպես նաև լավագույն միջազգային պրակտիկայի կիրառում երկրում պատմականորեն հաստատված փորձի և Վրաստանի առանձնահատկության հաշվառումով:

Քաղաքացիական ինտեգրումը դինամիկ, բազմաչափումնային և բազմակողմանի գործընթաց է և պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամի, ինչպես էթնիկ փոքրամասնությունների, այնպես էլ մեծամասնության ներկայացուցիչների կողմից ինտեգրման գործընթացներին լիարժեք մասնակցություն, համարժեք մոտիվացիա և ջանքեր, ինչպես նաև պատասխանատվությունների փոխանակում: Համապատասխանաբար, ռազմավարության նպատակակետ են դիտարկվում ինչպես էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ քաղաքացիները, այնպես էլ մեծամասնության ներկայացուցիչները:

Սույն ռազմավարության և համապատասխան գործնական պլանի միջոցով Վրաստանի կառավարությունը դրսևորում է ամբիցիա և տեսլական, կոմպլեքսային և համակարգային մոտեցումներով իրականացնել մեր երկրի բազմազգ հասարակության արդյունավետ ինտեգրումը: Ռազմավարության **փաստաթղթի խնդիրն է** այս նպատակով միջգերատեսչական, բազմասեկտորային, միասնական և հաջորդական մոտեցումներ ապահովել,

քաղաքականության իրականացման **շրջանակ ստեղծել** և դրա իրականացման համար հանրային գերատեսչությունների գործունեության և միջգերատեսչական համակարգված աշխատանքին դրսևորել աջակցություն: Ռազմավարության իմպլեմենտացիան պահանջում է մի կողմից բոլոր իրականացվելիք ինստիտուցիաների համաձայնեցված մոտեցում, իսկ մյուս կողմից նրանց բազմաբղետ և բազմազանեցված՝ դիվերսիֆիկացված գործնական ռազմավարությունների կիրառում: Նշված սկզբունքը կիրառվել է ինչպես ռազմավարության (2021-2030 թթ.) փաստաթղթի, այնպես էլ գործնական պլանի վրա աշխատելու գործընթացում:

Ռազմավարության շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ պետական քաղաքականությունը քննարկվում է երեք չափումներում՝ **երկրի ռազմավարական զարգացման, կայուն զարգացման նպատակների և Վրաստանի եվրոպական ընտրության համատեքստում:**

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021-2030 թվականների քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը նպատամղված է քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ուղղությամբ երկարաժամկետ և անշրջելի դրական փոփոխությունների իրականացման ապահովմանը և համապատասխան քաղաքականության իրականացման համար սահմանում է **հինգ առաջնահերթ ուղղություն**.

- ❖ պետական լեզուն՝ ինտեգրման աջակցություն,
- ❖ որակյալ կրթության մատչելիություն,
- ❖ իրավահավասարություն, քաղաքացիական և քաղաքական մասնակցություն,
- ❖ սոցիալական և տնտեսական ինտեգրում,
- ❖ միջմշակութային երկխոսություն:

Ռազմավարական առաջնահերթությունների, ամեն մի նախանշված խնդրի շրջանակներում առանձնահատուկ շեշտադրում է կատարվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց և երիտասարդների վրա՝ նրանց գորեղացման նպատակով, արդյունավետ մեխանիզմների զարգացման և նպաստող նպատակային ծրագրերի իրականացման, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման համար ակտիվ մոտեցումների արմատավորման և հավասարության վրա կենտրոնացած քաղաքականության, ինստիտուցիոն հնարավորությունների զարգացման համար:

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականության մեկնարկային կետն է մարդու իրավունքները: Նշված քաղաքականության ձեռքբերումները և առաջընթացը

հաղորդագրություն է Վրաստանի բնագրաված տարածքներում բնակվող արխագների և օսերի համար, որպեսզի նրանք ունենան մեր ընդհանուր ապագայի հավատքը միասնական պետությունում, որտեղ ապահովված կլինեն քաղաքացիական իրավահավասարությունը և պաշտպանված են յուրաքանչյուր քաղաքացու նույնականությունը և իրավունքները:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարությունը և գործնական ծրագիրը պատրաստվեց Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի (այսուհետև՝ պետական նախարարի աշխատակազմ) ղեկավարությամբ, Վրաստանի կառավարության վարչության հետ համագործակցությամբ և ճյուղային պետական գերատեսչությունների մասնակցությամբ, քաղաքացիական սեկտորի, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի և դրան առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի ակտիվ ընդգրկմամբ:

Ռազմավարության մշակման գործընթացի կառույցների ձևավորման նպատակով սահմանվեցին գործընթացը համակարգող կառավարական հանձնաժողովի աշխատանքի սկզբունքները և ժամանակագրված աշխատանքային ծրագիրը: Կառավարական հանձնաժողովի քարտուղարությանը հանձնարարվեց գործընթացի կառավարումը և համակարգումը: Քարտուղարության կողմից պետական նախարարի աշխատակազմի կայքէջի՝ www.smr.gov.ge վրա տարածվեց հրապարակային հայտարարություն ռազմավարության աշխատանքի մեկնարկի մասին, և պետական նախարարի աշխատակազմը շահագրգռված կողմերին, այդ թվում պետական գերատեսչություններին, ինչպես նաև անմիջականորեն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին և ոչկառավարական կազմակերպություններին կոչ արեց սահմանված ժամանակաշրջանում ներկայացնել ռազմավարության տեսլականը և առաջնահերթությունները՝ հետ կապված առաջարկությունները, վիճակագրական տվյալները, այն հետազոտությունները և հայեցակարգերը, որոնք կարող են արժեքավոր լինել ռազմավարության աշխատանքի գործընթացում: Նույն նպատակով, թղթակցություն առաքվեց բոլոր շահագրգռված գերատեսչություններին և կազմակերպություններին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ովքեր աշխատում են քաղաքացիական ինտեգրման հարցերով:

Իրավիճակի վերլուծության և նույնականացված մարտահրավերների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև պրոֆիլային գործունեությանը համապատասխան սեփական տեսլականները ներկայացնելու համար դիմում-խնդրանք ներկայացվեց փորձագիտական գիտելիքներ ունեցող տեղական և միջազգային գործընկեր կազմակերպություններին, այդ թվում, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիային, քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոնին, մարդու իրավունքների ուսուցման և մոնիթորինգի կենտրոնին, Եվրոպայի խորհրդին, ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի

Գերագույն հանձնակատարի գրասենյակին և այլն: Ստացված տեղեկատվությունը, փաստաթղթերը և առաջարկությունները կիրառվեցին իրավիճակի վերլուծության գործընթացում:

Ռազմավարության մշակումը սկսվեց հայեցակարգի պատրաստությամբ: Որպես գլխավոր սկզբունք որոշվեց մոտեցումը, որի համաձայն այն պետք է ստեղծվեր ռազմավարության փաստաթղթի աշխատանքային խմբին միացած բոլոր մասնակիցների և շահագրգռված կողմերի լիարժեք համամասնակցությամբ և պատասխանատվության բաշխմամբ:

Ռազմավարության մշակման **առաջին փուլում**, պատասխանատու միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելուն պես¹, խմբի անդամներն արտակարգ կարգով անցան հանրային քաղաքականության վերլուծության, ծրագրման, մոնիթորինգի և գնահատման վարժանքային դասընթաց, որը կենտրոնացված էր նոր կարգավորումների վրա, որոնցով Վրաստանի կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 20-ի #629 որոշմամբ սահմանվեցին Վրաստանի կառավարության քաղաքականության փաստաթղթերի մշակման, մոնիթորինգի և գնահատման միասնական ընթացակարգերը, մեթոդոլոգիան և չափորոշիչները²: Ռազմավարության մշակման (քաղաքականության պլանավորման) լրիվ բոլորապտույտը՝ ցիկլը ուղղորդվեց նշված կարգավորումների և համապատասխան ձեռնարկի հանձնարարականների նկատառումով, ինկյուզիվ կերպով, ապահովված էր շահագրգռված կողմերի և ակտորների լայն ընդգրկմամբ, այդ թվում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ:

Իրավիճակի վերլուծության վրա աշխատանքն ընթացավ քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման կառավարական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)³ և աշխատանքային խմբի անդամ ամեն մի հաստատության ճյուղային ուղղությունների համաձայն: Վերլուծաբանական գործընթացին աջակցության և արդյունավետ համակարգման նպատակով, հրավիրված էին ռազմավարական պլանավորման ուղղության միջազգային և տեղական փորձագետներ:

¹Աշխատանքային խմբին մասնակցում էին Վրաստանի հետևյալ պետական գերատեսչությունների ներկայացուցիչները. Կրթության և գիտության նախարարությունը, Մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարությունը, Շրջական միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարությունը, Վրաստանի պաշտպանության նախարարությունը, Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարությունը, Ներքին գործերի նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, ՀԻԲԱ Պետական լեզվի դեպարտամենտը, Մարդու իրավունքների պաշտպանության քարտուղարությունը, խորհրդարանի ազգային գրադարանը, Վիճակագրության ազգային ծառայությունը, Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթիի և Կախեթիի պետական լիազորների վարչությունները:

² <https://matsne.gov.ge/ka/document/view/4747283>

³ Վրաստանի կառավարության N122 որոշում - 2020 թվականի փետրվարի 20

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականության արդյունավետ ծրագրման նպատակով մանրամասնորեն քննարկվեցին 2015-2020 թվականների քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության կատարման միջանկյալ և վերջնական գնահատման փաստաթղթերը (պատրաստվեց անկախ փորձագետների խմբի կողմից), ինչպես նաև ամենամյա գործնական պլանների կատարման հաշվետվությունները: Պատրաստվեց մարդու իրավունքների, քաղաքացիական ինտեգրման և հարակից ոլորտների ուղղությամբ միջազգային և տեղական վերլուծական նյութերի (փաստաթղթերի և հանձնարարականների) քարտարան: Իրավիճակը վերլուծելիս բացահայտված սեկտորային մարտահրավերների համաձայն ընթանում էր տրամաբանական շրջանակի կազմում հիմնախնդիրների ծառի մեթոդի կիրառմամբ:

Միաժամանակ քննարկվեցին միջազգային մեխանիզմների, այդ թվում ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (FCNM)⁴, ՄԱԿ-ի բազմակողմանի պարբերական զեկույցի (UPR)⁵, ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI)⁶, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտում տեղական ակտորների, մասնավորապես, Վրաստանի ժողովրդական պաշտպանի⁷, ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի գնահատումները, տարբեր հետազոտությունների արդյունքները և հանձնարարականները: Ռազմավարությունը մշակելիս, ազգային օրենսդրական և ինստիտուցիոն շրջանակի հետ միասին, նկատառված էին միջազգային պայմանագրերով ստանձնած պարտականությունները, համապատասխան ճյուղային ոլորտների գործող ռազմավարությունները և հայեցակարգերը:

Հիմնախնդիրների վերլուծությունից հետո անցկացվեցին քննարկումներ, թե ինչպես կարելի էր գոյություն ունեցող լծակները դարձնել ավելի արդյունավետ և ինչպիսի ներխուժումները՝ ինտերվենցիաները, որ ռազմավարական այլընտրանքները կստեղծեն էական և բեկումնային փոփոխությունների հնարավորություն տարբեր, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալական ընդգրկման, զբաղվածության, պետական լեզվի իմացության բարձրացման, որակյալ կրթության մատչելիության և միջմշակութային երկխոսության զարգացման ուղղություններով:

Չնայած նրան, որ COVID-19-ի համաճարակի պայմաններում դեմ առ դեմ հանդիպումների ժամանակ որոշակի սահմանափակումներ էին սահմանվել, աշխատանքային գործընթացը

⁴ <https://rm.coe.int/3rd-op-georgia-en/1680969b56>

⁵ <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G15/187/99/PDF/G1518799.pdf?OpenElement>

⁶ <https://rm.coe.int/fourth-report-on-georgia/16808b5773>

⁷ <https://www.ombudsman.ge/geo/saparlamento-angarishebi>

հեռավար ռեժիմում ինտենսիվորեն էր ընթանում տարբեր էլեկտրոնային հաղորդակցական միջոցների կիրառմամբ:

Ռազմավարության մշակման **երկրորդ փուլում**՝ իրավիճակի վերլուծության փուլում բացահայտված հայտնագործությունների քննարկման և ռազմավարության տրամաբանական շրջանակի լիարժեքության, ռազմավարական առաջնահերթությունների, նպատակների և խնդիրների այլընտրանքների որոշման նպատակով, տեղի ունեցավ աշխատանքային խմբի տարբեր ձևաչափի շուրջ տասը հանդիպում/քննարկում տարբեր թիրախային խմբերի հետ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում:

Իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքում աշխատանքային խմբում սահմանվեց և կառավարական հանձնաժողովի շրջանակներում համադրվեցին քաղաքականության տեսլականը, ռազմավարական առաջնահերթությունները, նպատակները, խնդիրները և ինդիկատորները: Ռազմավարության գործողության ժամկետ սահմանվեց առաջիկա 10 տարին:

Ռազմավարության փաստաթղթի աշխատանքային տարբերակը հրապարակվեց Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի կայք-էջում և շահագրգռված անձինք 2021 թվականի մարտին հրավիրվեցին փաստաթղթի մասին կարծիքները գրավոր ներկայացնելու համար:

Ստացած հանձնարարականների հիման վրա վերանայվեցին և ավարտվեցին ռազմավարության բաղկացուցիչ փաստաթղթերը.

- ❖ գործնական ծրագիր 2021-2022 թվականների համար (Հավելված N2) – ներկայացված են ռազմավարական նպատակներին և խնդիրներին հասնելու համար ծրագրված միջոցառումները,
- ❖ տրամաբանական շրջանակ (Հավելված N3) – ներկայացված են ռազմավարական նպատակների և խնդիրների ազդեցության ինդիկատորները, որոնք որոշում են դրանց հասնելու ցուցանիշները և նպատակակետերը,
- ❖ հանրային խորհրդատվությունների հաշվետվություն (Հավելված N4) – ներկայացված է ստացված կարծիքների և հանձնարարականների նկատառման մասին մանրամասն տեղեկատվություն:

Ռազմավարական նախագծի մշակումից հետո փաստաթուղթը քննարկելու և կարծիքներ ներկայացնելու համար առաքվեց միջազգային և տեղական ոչկառավարական կազմակերպություններ, ինչպես նաև ակադեմիական շրջանների ներկայացուցիչներին: Փաստաթղթի միջազգային փորձաքննությունն ապահովեց ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-գերագույն հանձնակատարը, ով հաստատեց սույն փաստաթղթի համապատասխանությունը գործող միջազգային չափորոշիչներին:

Ոչկառավարական և միջազգային կազմակերպությունների, էթնիկ փոքրամասնությունների, փորձագետների, ինչպես նաև ճյուղային պետական հաստատությունների ներկայացուցիչների կողմից կարիքների վերլուծության և գնահատման հիման վրա ներկայացվեցին մեկնաբանություններ, հանձնարարականներ և առաջարկություններ, որոնք մանրամասնորեն քննարկվեցին աշխատանքային խմբի կողմից: Դրանց նշանակալից մասը նկատառված է սույն փաստաթղթում (Հավելված 4):

Ռազմավարական տեսլականի, նպատակների, խնդիրների, ակտիվությունների և համապատասխան ինդիկատորների քննարկման և համադրման նպատակով, գերատեսչությունների հետ անցկացվեց շուրջ 20 աշխատանքային հանդիպում/քննարկում հաղորդակցության տարբեր, այդ թվում, էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Լրացուցիչ շուրջ տասը հանդիպում անցկացվեց ռազմավարության փաստաթղթի վրա աշխատանքի վերջին փուլում, շահագրգռված հասարակության հետ նախագծի աշխատանքային տարբերակի ներկայացման-համաձայնեցման նպատակով:

Մշակված փաստաթղթի վերջնական տարբերակը քննարկվեց կառավարական հանձնաժողովի և Վրաստանի կառավարության աշխատակազմի հետ, որից հետո հաստատման համար ներկայացվեց Վրաստանի կառավարությանը:

II. ՌԱԶՄՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Սույն ռազմավարության փաստաթուղթը քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականությունը կքննարկի միջազգային և երկրի ներքին քաղաքականության համատեքստում, փոխկապակցված Վրաստանի եվրոպական ընտրության և համապատասխան քաղաքական բարեփոխումների հետ: Վրաստանն անդամակցում է մարդու իրավունքների պաշտպանության բոլոր այն հիմնական միջազգային իրավական ինստիտուտներին, որոնք այլ իրավունքների հետ միասին սահմանում են **էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցը**: Միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին ու Վրաստանի օրենսդրությանը համապատասխան, Վրաստանի քաղաքացիները, առանց էթնիկ, կրոնական կամ լեզվական պատկանելության խտրականության, իրավունք ունեն ամեն տեսակ ճնշումից դուրս պահպանել և զարգացնել իրենց մշակույթը, անձնական կյանքում կամ հրապարակավ օգտվել մայրենի լեզվից:

Իրականացված զանգվածային սահմանադրական բարեփոխման արդյունքում **Վրաստանի Սահմանադրությունում** 2018 թվականին էթնիկ փոքրամասնությունների հարցերի հստակ արտացոլումը մեկ անգամ կրկին հաստատեց, թե պետությունը որքան մեծ նշանակություն է շնորհում Վրաստանի քաղաքացի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին, նրանց նույնականության կարևորագույն բնութագրիչներին՝ մշակույթի, լեզվի,

ինքնատիպության պահպանությանը և զարգացմանը: Վրաստանի Մահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն, բոլոր մարդիկ օրենքի առջև հավասար են: Վրաստանի օրենսդրությունը և համապատասխան մեխանիզմները նախատեսում են ամբողջ շարք երաշխիքներ և ընթացակարգային նորմեր էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և մասնակցության համար: Այդ թվում.

- ❖ «Խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» Վրաստանի օրենք,
- ❖ «Պետական լեզվի մասին» Վրաստանի օրգանական օրենք,
- ❖ «Կառավարական ծրագիր 2021-2024 եվրոպական պետության կառուցման համար»,
- ❖ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և գործնական պլան»,
- ❖ «Վրաստանի կրթության և գիտության միասնական ռազմավարություն 2017-2021 թթ.»,
- ❖ Վրաստանի աշխատանքի և զբաղվածության քաղաքականության 2019-2023 ազգային ռազմավարություն»,
- ❖ «Մշակույթի ռազմավարություն 2025»⁸,
- ❖ «2020-2030 թթ. Վրաստանի երիտասարդական քաղաքականության հայեցակարգ» և այլն:

Վրաստանը հավատարիմ է մնում միջազգային կազմակերպություններում անդամակցությամբ ստանձնած պարտականություններին: Համապատասխանաբար, քաղաքացիական ինտեգրման գործընթացը, նույնպես հիմնվում է միջազգային փորձի և էթնիկ բազմազանության կառավարման միջազգային չափորոշիչների սահմանած քաղաքական-իրավական կարգավորումների, միջազգային պայմանագրերի, սկզբունքների և չափորոշիչների վրա մարդու իրավունքների ոլորտում:

Այդ թվում ռազմավարությունը լրիվությամբ համապատասխանում է Վրաստանի և Եվրամիության միջև 2014 թվականին ստորագրված մի կողմից, Վրաստանի և մյուս կողմից, «Եվրամիության և Եվրոպայի ատոմային էներգիայի միավորմանը և դրանց անդամ պետությունների միջև ասոցիացման մասին» համաձայնության նպատակին, ինչպիսին է ժողովրդավարական բարեփոխումների անցկացումը, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և մշակութային բազմազանության պաշտպանության և ինտեգրման ճանապարհով:

Նաև հետևյալ փաստաթղթերին.

- ❖ Վրաստան-Եվրամիության ասոցիացման օրակարգ,

⁸ Վրաստանի կառավարության որոշում N 303, 2016 թվական, 1 հուլիսի

- ❖ Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա,
- ❖ ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային փաթեթ,
- ❖ ռասայական խտրականության ամեն ձևի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա,
- ❖ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի հանձնարարականներ և ուղղորդող սկզբունքներ,
- ❖ կանանց նկատմամբ ամեն ձևի խտրականության վերացման մասին կոնվենցիա,
- ❖ ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հանձնակատարի Հաագայի, Օսլոյի, Լունդի, Վարշավայի, Լյուբլյանայի, Գրացիի և Տալինի թեմատիկ հանձնարարականներ և ուղղորդող սկզբունքներ,
- ❖ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներ (SDGs) – ազգային փաստաթուղթ:

Կրթության հարցերի ձևակերպման ժամանակ, սույն ռազմավարությունը և գործնական պլանը նկատառում են եվրոպական երկրների լավագույն փորձը, որը կուտակված է Եվրոպայի խորհրդի խորհրդականների կոմիտեի 1-ին թեմատիկ զեկույցում և ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի գերագույն հանձնակատարի Հաագայի հանձնարարականներում, իսկ ազգային փոքրամասնությունների կողմից մայրենի լեզվի և պետական լեզվի կիրառման/տիրապետման կապակցությամբ սույն փաստաթուղթը հենվում է ազգային փոքրամասնությունների հարցերով Եվրոպայի խորհրդի խորհրդականների կոմիտեի 3-րդ թեմատիկ զեկույցման և ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի գերագույն հանձնակատարի Օսլոյի հանձնարարությունների վրա:

II. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վրաստանը բազմազգ երկիր է, որը դարերի ընթացքում աչքի էր ընկնում երկրում բնակվող ազգերի փոխհանդուրժողական տրամադրվածություններով և միջմշակութային հարաբերություններով, խաղաղ համակեցությամբ և երկրի շահերի օգտին միասնական ջանքերի դրական փորձով: Էթնիկ և մշակութային բազմազանությունը ներկայացնում է մեր երկրի հարստությունը և նրա ժողովրդավարական և կայուն զարգացման նշանակալից ռեսուրսը:

2014 թվականին անցկացված համընդհանուր մարդահամարի արդյունքների համաձայն, Վրաստանի բնակչության (3 713,8 հազար անհատ, բացի Աբխազիայի և Ցխինվալի տարածաշրջանի/Հարավային Օսեթիայի) 13.1%-ը կազմում են (488 136 անհատ) էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Նրանց մեծ մասը՝ ազգությամբ ադրբեջանցիներ

(6.27%) և ազգությամբ հայեր (4.53%), հիմնականում խիտ բնակվում են Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններում: Բացի դրանից, փոքրաթիվ էթնիկ խմբեր տարբեր տարածաշրջաններում բնակվում են հոծաբնակ (քիստեր, ուդիներ, խունձեր, ասորիներ), այնպես էլ ցրված (օսեր, եզիդներ, քրդեր, ուկրաինացիներ, ռուսներ, հույներ, հրեաներ, գնչուներ և այլ էթնիկ խմբեր): Նրանց թվաքանակը կազմում է Վրաստանի բնակչության մոտավորապես 2.4%-ը:

Էթնիկ կազմ ⁹	Ընդամենը (հազար մարդ)	Տոկոսային բաշխում
վրացի	3 224,6	86,8
ադրբեջանցի	233,0	6,3
հայ	168,1	4,5
ռուս	26,5	0,7
օս	14,4	0,4
եզիդ	12,2	0,3
ուկրաինացի	6,0	0,2
քիստ	5,7	0,2
հույն	5,5	0,1
ասորացի	2,4	0,1
այլք	14,3	0,4
պատասխանից հրաժարում	0,6	0,0
ազգությունը նշված չէ	0,5	0,0

Անցած տարիների ընթացքում էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ ձեռք բերվեց նշանակալի առաջընթաց – բարելավվեց օրենսդրությունը, ջանքերը ուղղված էին ինստիտուցիոն մոտեցումների և մեխանիզմների ամրապնդման վրա: Ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ինստիտուտների կողմից **«Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարություն և համապատասխան գործնական պլան (2015-2020 թթ.)»** ձեռք բերած արդյունքների տեսանկյունից – էթնիկ փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական իրավիճակի, որոշումներ ընդունելու գործընթացում մասնակցության, կրթության մատչելիության և պետական լեզվի ուսուցման,

⁹ Բնակչության 2014 թվականի համընդհանուր մարդահամար, www.geostat.ge

քաղաքացիական ընդգրկման, իրազեկվածության և գիտակցության բարձրացման, մշակութային բազմազանության պաշտպանության և պահպանության տեսանկյունից՝ ընդհանուր առմամբ գնահատված էր դրական:

Առանձնահատուկ էր 2020 թվականը, երբ նոր կորոնավիրուսով առաջացած համաճարակը ամբողջ աշխարհը, այդ թվում, Վրաստանը, աննախադեպ մարտահրավերների առջև կանգնեցրեց: Համապարփակ ճգնաժամը որոշակիորեն խոչընդոտեց ռազմավարության շրջանակներում ծրագրված խնդիրների կատարումը: Կառավարության առաջնային գերակայությունը դարձավ գլոբալային համաճարակի դիմակայությունը, որը, մի կողմից՝ ուղղված էր դեպի քաղաքացիների առողջության մասին հոգատարությունը, իսկ մյուս կողմից՝ տնտեսական ճգնաժամը հաղթահարելուն: Երկրում ստեղծված համաճարակաբանական իրավիճակին համապատասխան, հիվանդության տարածման կանխարգելման և դրան ճիշտ արձագանքելու նպատակով, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում ջանքերը ուղղված էին բնակչությանը մայրենի լեզվով պարբերաբար տեղեկացնելու, ինչպես նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող խմբերին՝ առաջնային օգտագործման արտադրանքներով և հիգիենիկ միջոցներով ապահովելու կողմը: Նշվածը կարևորագույն դեր կատարեց բնակչության կողմից կարգավորումների պաշտպանությունում, համապատասխանաբար՝ հիվանդության տարածման կանխարգելման գործընթացում:

Չնայած քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ ձեռք բերված արդյունքներին, ընթացիկ իրավիճակը գնահատելիս բացահայտվեց, որ դեռևս գոյություն ունեն որոշակի կարիքներ և մարտահրավերներ, որոնց վրա արդյունավետ արձագանքը նույնպես նոր ռազմավարության շրջանակներում, էականորեն կարևոր է և աջակցում է երկրի էթնիկապես բազմազան բնակչության կարողունակության իրացմանը, քաղաքացիական իրավահավասարության ամրապնդմանը, տարբեր էթնիկ ծագում ունեցող բնակչության ներկայացուցիչների, որպես Վրաստանի լիարժեք քաղաքացիների, սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային իրավունքներով հավասար և արդյունավետորեն օգտվելուց: Առանձնահատուկ ուշադրության է արժանի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում պետական լեզվի իմացության որակի բարելավման անհրաժեշտությունը: Նույնպես մարտահրավեր է մնում հանրային կյանքին մասնակցության ուժեղացումը ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակով: Դրա հետ միասին, Վրաստանի տարբեր տարածաշրջաններում բնակվող համեմատաբար փոքրաթիվ էթնիկ խմբերի ներկայացուցիչները, ովքեր բարձր մակարդակով տիրապետում են պետական լեզվին և ավելի կամ պակաս չափով լիարժեքորեն ինտեգրված են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, հիմնականում սոցիալ-տնտեսական հարցերի կարգավորման և մշակութային ինտեգրման արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից ունեն աջակցության կարիք: Տարբեր ուղղություններով առկա մարտահրավերները փոխկապակցված են և պահանջում են ինչպես ինտեգրված մոտեցմամբ գնահատում, այնպես էլ արձագանք:

3.1. Պետական լեզվի ուսուցում

2002 թվականի առաջին ազգային համընդհանուր մարդահամարի տվյալներով, պետական լեզվին տիրապետում էր ոչվրացալեզու բնակչության միայն 30.99%-ը: Դրա հետ միասին, 2014 թվականի համընդհանուր մարդահամարի տվյալներով, ազգությամբ հայ քաղաքացիների 44,5% և ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիների 73,9% ազատորեն չէր տիրապետում վրաց լեզվին¹⁰:

Պետական լեզվի չիմացությունը նշանակալիորեն խոչընդոտում է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների լիարժեք մասնակցությունը երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին, միևնույն ժամանակ որոշակիորեն խանգարում է միմյանց մշակույթի, ավանդույթների փոխանակմանը և ընդունմանը: Համապատասխանաբար, ռազմավարությունը պետական լեզուն դիտարկում է որպես քաղաքացիական ինտեգրման հիմնական գործիքներից մեկը: Համապատասխանաբար, ներխուժումը՝ ինտերվենցիան ուղղված է վրաց լեզվի իմացության մակարդակի բարձրացման և կիրառման ուժեղացման կողմը:

Էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ լեզվական քաղաքականությունը բխում է ինչպես երկրի զարգացման նպատակներից, այնպես էլ պետության ներքին և միջազգային ինտեգրացիոն գործընթացներից, քաղաքացիական իրավահավասարության նպատակներից և ենթադրում է, մի կողմից, ոչվրացալեզու բնակչությամբ խիտ բնակվող տարածաշրջաններում պետական լեզվի կարգավիճակի ամրապնդում և ժողովրդականացում, իսկ մյուս կողմից, փոքրամասնությունների լեզուների, որպես մայրենի լեզու ուսուցման բարելավում:

Վերջին տարիներին համալիր և կանոնավոր բնույթ ստացան պետական լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ իրականացված միջոցառումները ինչպես մեթոդապես, այնպես էլ ակտորների ընդգրկմամբ: Կրթության բոլոր մակարդակներում ստեղծվեցին վրաց լեզուն սովորելու հնարավորություններ և իրավական երաշխիքներ: Լեզվի ուսուցման գործում նախադպրոցական, դպրոցական, մասնագիտական, բարձրագույն և չափահասների կրթության մակարդակի առջև ծառայած է հաջորդական, շարունակական և միասնական համակարգի մշակման հիմնախնդիրը: Այդ պատճառով, ներկայումս օրակարգում դրված է այս հարցի լուծումը և ուսումնական պլանների լիարժեք իրացման և արդյունավետորեն իրականացման հարցը:

Չափահասների կրթության մասում էթնիկ փոքրամասնությունների համար պետական լեզվի ուսուցման քաղաքականությունը նշանակալիորեն փոխակերպվեց, միաժամանակ

¹⁰ Աղբյուր. Կրաստանի վիճակագրության ազգային ծառայություն
http://census.ge/ge/results/census1/demo?fbclid=IwAR16xUDF3w7zviYDz_sIzduS6VmvQPR5ow0Fg_CG7KsOxmb2ezQN5tvPnGw

ընդարձակվեց, և բազմազան դարձավ շահառուների սեզմենտը: Եթե մինչ այդ ուսումնական ծրագրերը ուղղված էին միայն աշակերտների (ոչվրացալեզու դպրոցներում) և հանրային գործիչների (ՀԻԻԱ «Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի վրաց լեզվի կենտրոններում») վրա, այսօր արդեն վրաց լեզվի ուսուցման դասընթացները մատչելի են տարբեր թիրախային խմբերի համար և ծածկում են բոլոր տարիքային և մասնագիտական սեզմենտները: Արդյունքում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում տարեցտարի բարելավվում է վրաց լեզվի իմացության մակարդակը: Չափահասների սեզմենտին կողմնորոշված ՀԻԻԱ «Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը» 13 ուսումնական կենտրոնի և 171 մոբիլ խմբի միջոցով իրականացնում է պետական լեզվի ուսուցման բազմատեսակ ծրագրեր: COVID-19 համաճարակի պայմաններում ի պատասխան առաջացած մարտահրավերների, այս խմբերը գործունեությունը շարունակեցին հեռավար ուսուցման ռեժիմով: Դպրոցը շահագրգռված անձանց պետական լեզվի ուսումնական դասընթացում առաջարկում է նաև ճյուղային լեզվի ծրագրեր, հաղորդակցական և մասնագիտական բառապաշարի նախատեսմամբ: 2015-2020 թվականներին վրաց լեզվի դասընթացը հաջողությամբ ավարտեց մոտավորապես 16 000 ունկնդիր: Լեզվի ուսուցումը հասանելի դարձավ նաև հոգևոր անձանց համար: Պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, ՀԻԻԱ «Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի» կողմից վրաց լեզվի ուսուցման դասընթացներ բացվեցին Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Մառնեուլիի և Դմանիսիի մունիցիպալիտետների հոգևոր անձանց համար (100-ից ավելի շահառու): Նրանց ընդգրկումը դրական ազդեցություն ունեցավ տեղական բնակչության կողմից վրաց լեզուն սովորելու մոտիվացիայի վրա:

Վրաց լեզվի դասընթացը անընդմեջ ռեժիմով իրականացվում է զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցնող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար՝ 10 դաշտային-զինավարժային հենակայաններում (1111 շահառու), ինչպես նաև դատապարտյալների համար՝ պատժակատարողական համակարգում: Պետական լեզուն սովորելու ծրագրերում ակտիվորեն ընդգրկվեցին Ախալքալաքիի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներում ներքին գործերի նախարարության համակարգում զբաղված անձինք:

Նախադպրոցական կրթության մասին նոր օրենքի համաձայն, ոչվրացալեզու մանկապարտեզներում վրաց լեզվի բազիսային հաղորդակցության ունակությունների զարգացումը դարձավ պարտադիր: Մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողների համար պլանավորվեց և իրականացվում է վրաց լեզվի ուսուցում մասնագիտական կրթական ծրագրի յուրահատկության նկատառումով:

2015 թվականից «Վրաց լեզու ապագա հաջողությունների համար» ծրագրի շրջանակներում մասնակից խորհրդական-ուսուցիչների համար (200-ից ավելի) անցկացվեց վրաց լեզվի ուսուցման երկարաժամկետ մեթոդական դասընթաց: Դրանց գործունեությունը ոչվրացալեզու

զյուղերում նշանակալիորեն բարելավեց աշակերտների շրջանում վրաց լեզվի իմացության մակարդակը:

Այս ուղղությամբ նաև նշանակալից դեր կատարեցին ոչձևական կրթության ակտիվությունները, մասնավորապես, վրաց լեզվի կիրառման իրավասությունների ուժեղացման նպատակով կազմակերպվեցին էթնիկ փոքրամասնությունների և մեծամասնության ներկայացուցիչներից կազմված ամառային ճամբարներ, որոնց մասնակցում էին ոչվրացալեզու դպրոցների աշակերտներ և ծրագրի խորհրդատու-ուսուցիչներ: Ծրագրի ավարտից հետո չի նվազել դրա նկատմամբ հետաքրքրությունը: Բնակչության կողմից ամրագրվում է պահանջ ծրագրի նորացման և ընդարձակման կապակցությամբ:

Չնայած վերոնշյալ արդյունքներին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում վրաց լեզվի իմացության և կիրառման հարցը շարունակում է մնալ որպես մարտահրավեր, ինչը բնակչության համար ստեղծում է հիմնախնդիր ոչ միայն առօրյա հաղորդակցության, այլև երկրում ընթացող գործընթացների մասին տեղեկատվություն ստանալու, զբաղվածության, կրթության և սպասարկումներով լիարժեք օգտվելու հարցում: Դրված է ծրագրերի մասշտաբների ընդարձակման և որակի բարելավման նպատակով ավելի արդյունավետ ինտեգրվեցիաների կարիք, ինչը կապված է բազմաթիվ գործոնների (ծրագրեր, ռեսուրսներ, մանկավարժներ, աշխարհագրական մատչելիություն և այլն) հետ: Գոյություն ունեցող մարտահրավերները հաղթահարելու համար սկսվել է աշխատանքը վրաց լեզվի իրավասությունները պրագմատիկ համատեքստ տեղափոխելու արդյունավետ ուղիների որոնման և ծրագրերի ինտեգրմանը աջակցող ակտիվություններով հարստացման համար, որը ենթադրում է բոլոր թիրախային տարիքային սեգմենտների մասնակցություն:

3.2. Կրթության որակ

3.2.1. Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական կրթության մատչելիության բարելավման նպատակով, վերջին տարիներին ինտենսիվորեն ընթանում է մանկապարտեզների շինարարություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում, թեև նախադպրոցական կրթությունը դեռևս ոչարդյունավետորեն է կիրառում այն որպես մեկնարկ հանրային կրթության և վրաց լեզուն սովորելու նախապատրաստության, քաղաքացիական ինտեգրման քաղաքականության անցկացման կարևոր գործիք: Պետական լեզուն սովորելու ամենաարդյունավետ ճանապարհը այն նախադպրոցական կրթության աստիճանից սկսելն է: Կրկին հատվում են հիմնախնդիրները, նախադպրոցական և տարրական աստիճանի ինտեգրման և փոխադրման՝ տրանզիցիայի արդյունավետ մեխանիզմների ստեղծման տեսակետից:

Վաղ և նախադպրոցական կրթության լայնամասշտաբ պետական բարեփոխման շրջանակներում մշակված նոր կրթական և ենթակառուցվածքային չափորոշիչներին համապատասխան, մունիցիպալիտետներում տեղական յուրահատկության հաշվառումով, ընթանում է նախադպրոցական կրթության սեկտորի զարգացման ռազմավարությունների մշակում, որի նպատակն է հատել նոր՝ «Վաղ և նախադպրոցական դաստիարակության և կրթության մասին» օրենքի պահանջների գործադրումը որակյալ կադրերի մոբիլիզացման, ինչպես նաև ուսումնա-դաստիարակչական ենթակառուցվածքային հարցերում:

Իսկ գոյություն ունեցող նախադպրոցական հաստատություններում, կրթության և հոգատարության սպասարկումների որակը, առավելագույն դեպքերում, նշանակալից բարելավման կարիք ունի:¹¹ Ոչվրացալեզու մանկապարտեզների համար սկսվել է վրաց լեզվի կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրի վերամշակումը, որի արմատավորումը համապատասխան թիրախային տարիքային խմբերին կտա վաղ տարիքում վրաց լեզուն սովորելու հնարավորություն:

Հատկանշական է, որ դպրոցական պատրաստության ծրագրում ընդգրկվեցին նաև ոչվրացալեզու նախադպրոցական հաստատությունները: Այս ծրագրերի մատչելիությունը վերջին տարիներին նշանակալիորեն բարձրացավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Նշված ծրագրի արմատավորման համար, դաստիարակման կազմակերպչական մասնագիտական զարգացման վարժանք-մոդուլով էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող մունիցիպալիտետներից (Ախալխալաքի, Ախալցխե, Նինոծմինդա, Ախմետա, Լագոդեխի, Սագարեջո, Բոլնիսի, Գարդաբանի, Սառնեուլի, Ծալկա, Դմանխի) ՀԻԲԱ «Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի» կողմից վերապատրաստվեց նախադպրոցական դաստիարակության և կրթական հաստատությունների կրթական ծրագրերի 27 համակարգող/մեթոդիստ, թեև ոչվրացալեզու նախադպրոցական հաստատությունների վարչության ներկայացուցիչները և ուսուցիչները դեռևս չեն անցել նախապատրաստական մասնագիտական զարգացման ծրագրեր, ինչը անհրաժեշտ է նոր չափորոշիչներին համապատասխան ծրագրերի ներդրման համար:

Միաժամանակ լուծվելու է դպրոցական պատրաստության ծրագրի մատչելիության և գործող մանկապարտեզներում ոչլիարժեք իրացման հիմնախնդիրը: Նշված բաղադրիչը մեծ մասամբ պայմանավորում է դեռահասների շրջանում հանրային կրթության համար պատրաստությունը և ազդեցություն է գործում դրանց հետագա զարգացման վրա:

¹¹Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թթ. գործնական պլանի կատարման եզրափակիչ գնահատում, www.smr.gov.ge

Նույնպես հասվում է ուսումնական և մեթոդական նյութերի ստեղծման և էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով թարգմանության, նախադպրոցական կրթության դաստիարակ-ուսուցիչների պատրաստման և մասնագիտական զարգացման ուղղությամբ գործուն քայլերի ժամանակին կատարման անհրաժեշտությունը:

Ուշագրավ է, որ Վրաստանում վաղ տարիքի երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկման ցուցանիշը 69,5% է, էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում՝ 25,5% (միջինը) ինչը եվրոպական թիրախային նշանդրից՝ 95%-ով պակաս է: Ընդունելության ցուցանիշը նշանակալիորեն ցածր է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ սոցիալապես անպաշտպան և գյուղում բնակվող երեխաների շրջանում:¹²

3.2.2. Հանրային կրթություն

Քաղաքացիական ինտեգրման պետական քաղաքականության համար հանրային կրթության հնարավորությունների զարգացումը կարևոր առաջնահերթություններից մեկն է: Հանրային կրթության մասին Վրաստանի օրենքի համաձայն, այն քաղաքացիները, որոնց համար վրացերենը մայրենի լեզու չէ, իրավունք ունեն լրիվ հանրային կրթություն ստանալ իրենց մայրենի լեզվով, ազգային ուսումնական պլանով նախատեսված ծրագրին համապատասխան («Հանրային կրթության մասին» օրենք, հոդված 4, կետ 3): Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար գործում է շուրջ 300 ոչվրացալեզու հանրային դպրոց և սեկտոր (դպրոցների ընդհանուր քանակի 14%), ինչը համամասնական է աշակերտների թվաքանակին (շուրջ 52 000 աշակերտ, ընդհանուր թվաքանակի 10%): Ոչվրացալեզու դպրոցների և սեկտորների մեծամասնությունը տեղաբաշխված է գյուղում՝ 76,7% և քաղաքատիպ բնակավայրերում 23,3%:

2020 թվականի դրությամբ, ոչվրացալեզու դպրոցի մանկավարժները կազմում են ուսուցիչների ընդհանուր թվաքանակի 10%-ը (6715): Նրանց մեծամասնությունը՝ 43.40%-ը ադրբեջանալեզու է, 39,70% -ը՝ հայալեզու և 16,90% -ը՝ ռուսալեզու: Դպրոցների մեծամասնությունում ուսումնական գործընթացը մի քանի սեկտորում ընթանում է զուգահեռաբար (վրաց-ադրբեջանական, վրաց-ռուսական, վրաց-հայկական, վրաց-ադրբեջանա-ռուսական և վրաց-ռուսական-հայկական սեկտորներ):

¹² Վրաստանում նախադպրոցական կրթության որակի հետազոտություն, 2018, UNICEF, <https://www.unicef.org/georgia/media/1236/file/Preschool%20Quality%20Study.pdf>

Ուսուցիչների թվաքանակը դասավանդման լեզվի համաձայն¹³

Ադրբեջանալեզու	2914	43.40%
Հայալեզու	2668	39.70%
Ռուսալեզու	1133	16.90%
Ընդամենը.	6715	100.00%

Ոչվրացալեզու համընդհանուր կրթական հաստատություններում ուսումնական պլանով նախատեսված է բոլոր այն առարկաների ուսուցումը, որոնք դասավանդվում են վրացալեզու դպրոցներում: Առարկաների մեծամասնությունը էթնիկ փոքրամասնությունների մայրենի լեզուներով է դասավանդվում, թեև հասարակական գիտությունների (պատմություն, աշխարհագրություն և քաղաքացիական կրթություն) դասավանդումը պարտադիր է վրաց լեզվով: Նշվածը դեռևս նկատառվում է մասամբ կամ կատարվում է միայն որոշ դպրոցներում, մանկավարժների շրջանում վրաց լեզվի իմացության կամ համապատասխան որակավորում ունեցող կադրային ռեսուրսների պակասի պատճառով: Այս նույն պատճառով հանրային կրթության որակը կրկին մարտահրավերային է մնում այլ առարկաների դասավանդման մի մասում: 2020 թվականի դրությամբ, նշված դպրոցներում զբաղվածություն ունեցող ուսուցիչների 62.7%-ից ավելին պրակտիկոս-ուսուցչի կարգավիճակ ունի, ինչը ուսուցիչների մասնագիտական զարգացման սխեմայի համաձայն ամենացածր աստիճանն է և ուղղակիորեն արտացոլվում է ուսուցման որակի վրա: Ոչվրացալեզու դպրոցներում ավագ կարգի ուսուցչի կարգավիճակին տիրապետում է ուսուցիչների 24.5%-ը և միայն 1%ն է մտնում առաջատար ուսուցչի կատեգորիայում, իսկ ղեկավարի՝ մենտորի կարգավիճակ ունի միայն 7 ուսուցիչ, ինչը կազմում է ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների ընդհանուր թվաքանակի 0,1% տոկոսը:

Դրա հետ միասին, ոչվրացալեզու աշակերտներին անհավասար կրթական միջավայր է ստեղծում ոչվրացալեզու դպրոցներում ազգային ուսումնական պլանի արմատավորման ուշացումը վրացալեզու դպրոցների նկատմամբ, ինչպես նաև հին ծրագրերին համապատասխան դասագրքերի կիրառումը և ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերի ոչ սխտեմատիկությունը:

Կրթության քաղաքականության գլխավոր շեշտադրությունը կատարվում է ուսուցիչների պատշաճ պատրաստության վրա: Հատուկ պետական ծրագրերը նախատեսում են տարածաշրջաններում երիտասարդ, արհեսավարժ և բարձր շարժառիթային կադրերի գործուղումը, այդ թվում այնպիսի երկլեզու մանկավարժների, որոնք ստացել են մասնագիտություն, այսպես կոչված «1+4 կրթական ծրագրի» շրջանակներում և բարձր մակարդակով տիրապետում են պետական և մայրենի լեզուներին: Նրանց համար

¹³Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020թթ. գործնական պլանի կատարման եզրափակիչ գնահատում, www.smr.gov.ge

պետությունը առանձնահատուկ պայմաններ է ստեղծում ինչպես վարձատրության, այնպես էլ կեցության տեսակետից: Թեև ոչվրացալեզու դպրոցների վրաց լեզվի և գրականության վրացալեզու մանկավարժների պահանջը դեռևս բավարարված չէ:

Վրաց լեզվի դասավանդման քաղաքականությունը ուժեղացնելու համար նշանակալի են հետազոտությունների արդյունքները (Գնահատման և քննությունների ազգային կենտրոն, 2019 թ. «Պետական գնահատում – վրացերենը որպես երկրորդ լեզու»), որտեղ պարզորոշ երևում է, որ ոչվրացալեզու դպրոցի աշակերտների մեծամասնությունն ունի պետական լեզուն սովորելու ցանկություն, իսկ նրանց ծնողների մեծ մասը գտնում է, որ վրաց լեզվի իմացությունը աշակերտին կօգնի զբաղվածության և ինտեգրման մեջ:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար հարևան երկրներից բերված մայրենի լեզվի դասագրքերի բովանդակությունը խանգարում է Վրաստանի, որպես հայրենիքի հետ նույնականացմանը և դրանում մեծ մասամբ անորոշություն է ստեղծում: Նշանակալից է նշված հարցի ժամանակին կարգավորումը և դասագրքերի մշակումը Վրաստանում: Նաև լուծման կարիք ունեն այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են. բազմալեզու կրթության արդյունավետ մոդելի ընտրությունը և արմատավորումը, առարկայական դասագրքերի ժամանակին թարգմանությունը, բազմամշակութային կրթությունը, ուսուցիչների որակավորման բարձրացումը: Մի շարք դպրոցներում սուր կերպով դրված է ենթակառուցվածքի և ռեսուրսների զարգացման անհրաժեշտությունը, այդ թվում ուսումնական նյութերի, համակարգչային տեխնիկայի և լաբորատորիաների:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում աշակերտության կրթությանն ընդգրկվածության ցուցանիշը զգալիորեն ցածր է միջին աստիճանի վրա, ինչը շեշտակիորեն ետ է մնում վրացալեզու դպրոցների ցուցանիշներից: Նշված դպրոցներում մարտահրավեր է մնում աշակերտների հաճախումը և ուսումը թողնելը, ինչը հիմնականում կապվում է աշակերտների վարձատրվող զբաղվածության հետ: Իսկ աղջիկների կողմից ուսումը թողնելու պատճառը, առավելապես վաղ ամուսնությունն է:


3.2.3. Բարձրագույն կրթություն

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ռազմավարության շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար բարձրագույն կրթության մատչելիության նպատակով մշակվել է հատուկ արտոնյալ քաղաքականություն¹⁴,

¹⁴Երիտասարդները ծրագրին ընդունվում են մայրենի լեզվով մեկ քննություն հանձնելով – հայերեն, ադրբեջաներեն (Ընդհանուր ունակությունների թեստ) և օսերեն, արխազերեն լեզուներով (մայրենի լեզվի թեստ)

որը ենթադրում է «Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագիր»¹⁵ (այսպես կոչված «1+4 կրթական ծրագիր») անցնելուց հետո բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվել ցանկալի մասնագիտություն սովորելու համար: Նշված բացառիկ և պարզեցված մոտեցումը ոչվրացալեզու դիմորդներին ճանապարհ բացեց դեպի բարձրագույն կրթություն: Եթե մինչ այդ վրաց լեզվի չմագնության պատճառով երիտասարդները բարձրագույն կրթություն ստանալու համար մեծ մասամբ հարևան երկրներին էին տալիս առավելությունը, նշված ծրագիրը տրամաչափորեն փոխեց բարձրագույն կրթության նկատմամբ վերաբերմունքը, բարձրացավ կրթություն ստանալու շարժառիթը, առաջնային դարձավ բարձրագույն կրթության ստացումը Վրաստանի համալսարաններում: Համապատասխանաբար, ծրագրին ընդունված ուսանողների թվաքանակը 2010 թվականի համեմատությամբ (247 դիմորդ), գրեթե 5-անգամ աճեց և 2020 թվականին նրանց թվաքանակը հասավ 1191-ի (դիտեք՝ դիագրամը):

Դիագրամ. «1+4 կրթական ծրագիր» ուսանողների թվաքանակն ըստ տարիների



Ի դեմս ծրագրի շրջանավարտների, այսօր երկիրն արդեն ունի լավ պատրաստված երիտասարդներ, որոնք մայրենի լեզվի հետ միասին տիրապետում են պետական լեզվին, ունեն գիտելիք և մասնագիտական ունակություն-հմտություններ և ակտիվորեն ընդգրկված են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Ուսանողների վերաբերմունքների հետազոտության 2013 և 2016 թվականների դինամիկայում ցույց է տրված ծրագրի նկատմամբ

¹⁵ Բակալավրիատի, դիպլոմավոր բուժաշխատողի/ատամնաբույժի/անասնաբույժի կամ դիպլոմավոր մասնագետի կրթական ծրագիր», այսպես կոչված «1+4 կրթական ծրագիր»

դրական գնահատման ընդհանուր աճի դինամիկան:¹⁶ «Քվտացման համակարգի արդյունքում շեշտակիորեն աճեց ընդունելության քննություն հանձնել ցանկացողների թվաքանակը»: Թեև հատկանշական է, «որ բակալավրի մակարդակով ընդունված ուսանողների մոտ ծագեցին որոշակի հիմնախնդիրներ, ինչը որոշ դեպքերում կապվում է ֆինանսական խնդիրների և որոշ դեպքերում լեզվական կամ ակադեմիական պատրաստություն չունենալու հետ»¹⁷: Համապատասխանաբար, համալսարանն ավարտելու ցուցանիշը բավականին ցածր է (մոտավորապես 30%) և, չնայած այն բանին, որ ծրագիրը ժողովրդականացված է երիտասարդների շրջանում, դրա նկատմամբ պահանջը աճող է և բարձրագույն կրթության մատչելիության տեսանկյունից համարվում է այլընտրանք չունեցող: Առաջիկա հեռանկարների հաշվառումով, ծառայած է ծրագրի զարգացման կարիք ինչպես բովանդակային և մեթոդոլոգիական ուղղությամբ, այնպես էլ կազմակերպչական տեսանկյունից, որպեսզի էլ ավելի արդյունավետ դառնա ինչպես կրթություն ստանալու, այնպես էլ ինտեգրման տեսակետից»:

Մասնագիտությունների համաձայն, ոչվրացալեզու ուսանողների ընտրության մեծ մասը ընկնում է բիզնեսի վարչարարության ծրագրի վրա՝ 37%, նույնպես բարձր տեսակարար մաս ունեն մարդասիրական՝ հումանիտար գիտությունների ծրագրերը՝ 27%, ինչպես նաև իրավաբանական և սոցիալական գիտությունները: Չափից դուրս ցածր է ճշգրիտ և բնագիտական առարկաների տեսակարար մասը: Նշանակալիորեն բարձրացել է կրթության ուղղության բաժինը և այն կազմում է տասներկուերորդ դասարանցիների շրջանում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու ցանկություն ունեցողների 21%-ը, ինչը միանշանակ դրական ավանդույթ է և ոչվրացալեզու դպրոցների համար ապագա ուսուցիչներ արդյունավետորեն պատրաստելու հնարավորություն է տալիս¹⁸:

3.2.4. Մասնագիտական և չափահասների կրթություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների լիարժեք ինտեգրման համար մասնագիտական և չափահասների կրթությունը ներկայացնում է առաջնահերթային բաղադրիչներից մեկը, քանզի այն արագ զբաղվածության և սոցիալ-տնտեսական ակտիվությունների մեկնարկման կարևորագույն նախապայման է: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մասնագիտական կրթությանը ընդգրկվելու լեզվական պատնեշը վերացնելու նպատակով իրականացվեց մասնագիտական ծրագրերում վրաց լեզվի ուսումնական դասընթացի ինտեգրում: Միաժամանակ

¹⁶ Արտոնյալ քաղաքականության արդյունավետության և արդյունքների հետազոտություն Վրաստանի բարձրագույն կրթության համակարգում 2010-2019, էջ 99

¹⁷ Ibid, էջ. 46

¹⁸ Ibid, էջ. 57

մասնագիտական կրթական ուսումնարանների ցանցի ընդարձակման արդյունքում աճեց բնակության վայրին մոտ մասնագիտական կրթություն ստանալու մատչելիությունը:

2016 թվականից ոչվրացալեզու ապլիկանտներն ունեն հնարավորություն մասնագիտական թեստավորում անցնեն ադրբեջաներեն, հայերեն կամ ռուսերեն լեզվով և պետական ֆինանսավորմամբ ընդունվեն մասնագիտական կրթական հաստատություններ, իսկ վրաց լեզվի մոդուլն ավարտելուց հետո, տիրապետեն ցանկալի մասնագիտությանը: Նշված նախաձեռնության հաջողությունը պայմանավորեց մասնագիտական կրթությամբ հետաքրքրվող ոչվրացալեզու անձանց կողմից պահանջի նշանակալիորեն աճ, որին ի պատասխան պետությունը կատարեց հանդիպակաց քայլեր և 2020 թվականին նախարարությունը սկսեց աշխատանքը մասնագիտական կրթության տարածքում պետական լեզվի ծրագրի զարգացման ուղղությամբ, որը ապագայում էլ ավելի կբարձրացնի ուսուցման որակը և մատչելիությունը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար:

2020 թվականի դրությամբ, թեստավորումը մայրենի լեզվով անցնելու ցանկություն հայտնեց 432 անձ, նրանցից 223-ն ընդունվեց համապատասխան ծրագրին: Իսկ առաջիկայում, ավելի շատ ջանքեր կգործադրվեն էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում այս տիպի ծրագրեր առաջարկելու ուղղությամբ, որովհետև մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման հնարավորություն ծագեց էթնիկ փոքրամասնություններով բնակվող լրացուցիչ երկու մունիցիպալիտետում՝ Մառնեուլիում և Ախալքալաքիում:

2019 թվականից սկսեց զարգանալ մասնագիտական կրթության համակարգում չափահասների կրթության համակարգը: Չափահասներին առաջարկված են զբաղվածության վրա կողմնորոշված կարճատև դասընթացներ¹⁹: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական ունակությունների զարգացման ուղղությամբ նշանակալից ակտոր է ՀԻԻԱ «Ձուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը», որն ի պատասխան առկա կարիքներին և նոր մարտահրավերներին, կարճ ժամանակում կմշակի և կիրականացնի հանրային գործիչների մասնագիտական զարգացման և խորհրդատվության ծրագրեր, ինչպես նաև տեղական ինքնակառավարումների գործունեության ուժեղացման նպատակով կստեղծի նպատակային վարժանք-մոդուլներ և կապահովի թիրախային սեզմենտի ներկայացուցիչների ընդգրկումը:

¹⁹ Աղբյուր. Վրաստանի կրթության և գիտության նախարարություն

3. Աջակցություն փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական քաղաքականությունը նախատեսում է միասնական մոտեցում ինչպես մեծաթիվ, այնպես էլ փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների առնչությամբ, ինչը նպատակամղված է մշակութային ինքնատիպության պահպանությանը և աջակցությանը, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ընդգրկվածության բարելավմանը: Միաժամանակ նկատառված են յուրաքանչյուր խմբի շահերը և կարիքները:

Փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծամասնությունը տիրապետում է պետական լեզուն, հանրային կրթություն է ստանում վրացալեզու կրթական հաստատություններում, տեղեկացված է պետական ծրագրերի և սպասարկումների մասին, ակտիվորեն ընդգրկված է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Պետության կողմից աջակցություն է ցուցաբերվում նրանց մշակույթի, ավանդույթների բացահայտման և հանրայնացման, կրթա-մշակութային ակտիվությունների իրականացման նկատմամբ:

2016 թվականից, պետության աջակցությամբ առաջին անգամ արմատավորվեց փոքրաթիվ էթնիկ խմբերի ուսուցումը մայրենի լեզուներով, մասնավորապես. օսերեն (2 դպրոց), չեչներեն (7 դպրոց), խունձերեն (3 դպրոց), ուդիերեն (1 դպրոց), ասորերեն (1 դպրոց): Այս լեզուների ուսուցումը՝ պահանջի համապատասխան ընթանում է Կախեթիի (Ղվարելի, Լագոդեխի, Պանկիսի կիրճ) և Սցխեթա-Մթիանեթիի (գյուղ Քանդա) հանրային դպրոցներում:

Փոքրաթիվ էթնիկ փոքրամասնություններից առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն գնչուները, որպես խոցելի միջավայրում բնակվող համայնք: Նվազագույնն է գնչուների ընդգրկումը ընթացիկ սոցիալական ծրագրերին և նրանց ակտիվությունը հասարակական կյանքում: Զուգահեռաբար բացահայտվում է կրթություն ստանալու նկատմամբ բացասական վերաբերմունքը, թեև գործընթացը սկսված է և գործադրված ջանքերի շնորհիվ գնչու դեռահասներին դպրոց մտցնելու և նրանց համար հատուկ ուսուցիչների կողմից մշակված անհատական պլանները օժանդակեցին նրանց սոցիալականացմանը և դրական տրամադրվածությունների առաջացմանը կրթական ակտիվությունների նկատմամբ: Գնչուների ինտեգրման գործընթացում որոշակի դրական փոփոխություններ նույնպես նկատվում են պետական ինստիտուտների նկատմամբ վերաբերմունքում՝ նրանք ավելի ու ավելի հաճախ են դիմում բժշկական (ծննդաբերական) հիմնարկություններ, ինչը նորածիների համար ծննդյան վկայական տալը նշանակալիորեն հեշտացնում է: Գնչուների համայնքի համար կրկին մարտահրավեր է մնում պետական սպասարկումների մասին տեղեկատվության հասանելիությունը: Ընթանում է գնչուների հաշվառքի, նույնականության փաստաթղթերի կարգավորման և համապատասխան իրավական կարգավիճակի որոշման գործընթացը: Չնայած այն բանին, որ այս տեսանկյունից քայլեր կատարվեցին, նրանց որոշակի մասը դեռևս չունի անձը հաստատող վկայականներ: Այդպիսով, ծառայած է

անհրաժեշտություն էլ ավելի շատ ջանքեր ուղղված լինեն գնչուների իրավական փաստաթղթերը կարգավորելու գործընթացին: Առկա իրավիճակն ունի համալիր վերլուծության կարիք: Նախ և առաջ կարևոր է նրանց ճշգրիտ թվաքանակի սահմանումը, պաշտոնական վիճակագրության վարումը, ինչը հնարավորություն կտա որոշելու համայնքի կարիքներին հարմարեցված և արդյունքի վրա կողմնորոշված կոնկրետ գործողություններ:

3.4. Քաղաքացիական-քաղաքական մասնակցություն

Էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական, քաղաքական և սոցիալական ինտեգրումը ժողովրդավարական հասարակության զարգացման կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած նրան, որ այս ուղղությամբ վերջին տարիների ընթացքում բազում նախագիծ կամ նախաձեռնություն իրականացվեց, քաղաքական կյանքում ընդգրկվածության տեսանկյունից ձեռնտու արդյունքների համար դեռևս կարևոր քայլեր են կատարվելու:

Հավասարության սկզբունքների արդյունավետ իրականացման համար էական հարց է ներկայացնում հավասար ընտրական միջավայրի հաստատումը և էթնիկ փոքրամասնությունների կողմից գիտակցված ընտրություն կատարելուն օժանդակության տեսակետից գիտակցականության բարձրացումը: Որպեսզի կենտրոնական և ինքնակառավարման կառույցներում ավելանա էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցչությունը և մասնակցությունը, նույնպես կարևոր է հասարակության իրազեկումը և նպատակաուղղված կրթական գործունեությունը իրավական և այլ իրավունքների վերաբերյալ:

Երկրում անցկացված խորհրդարանական, նախագահական և տեղական ինքնակառավարման ընտրություններում վերջին տարիներին նկատվում է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության աճ: Այս տեսակետից նշանակալից էր Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) դերը, որի կողմից ինտենսիվորեն իրականացվում էր ընտրական գործընթացի մասին քաղաքացիների իրազեկում, ընտրական աշխատակիցների պատրաստություն և վերապատրաստություն, ընտրական փաստաթղթերի թարգմանություն հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, ինչպես նաև ոչկառավարական կազմակերպությունների դրամաշնորհային ֆինանսավորում, որոնք ընտրական գործընթացների կապակցությամբ բնակչության գիտակցականությունը բարձրացնելու կողմն է ուղղված: Նշված միջոցառումները արդյունքում բերեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական և ընտրական գործընթացներում մասնակցության դինամիկայի աճ:

Նշանակալից է, որ 2016-2020 թվականներին Վրաստանում անցկացված երկու խորհրդարանական ընտրություններում (2016 և 2020 թվականներ), տեղական

ինքնակառավարման ընտրություններում (2017) և Վրաստանի նախագահի ընտրություններում (2018) էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների տոկոսային մասը էականորեն չի փոփոխվել, համապատասխանաբար (8641 ներկայացուցիչ)²⁰, իսկ ընտրական վարչարարության դասընթացներ անցավ և հավաստագիր ստացավ էթնիկ փոքրամասնության 3507 ներկայացուցիչ:

Աղյուսակ. Վիճակագրական տեղեկատվություն հայալեզու և ադրբեջանալեզու ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների մասին

Ընտրությունների անվանում	Հայալեզու ադրբեջանալեզու ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների թվաքանակ (ընդամենը)	և Հայալեզու	Ադրբեջանալեզու
Վրաստանի խորհրդարանի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի ընտրություններ	2 681	1 343	1 338
Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի հոկտեմբերի 21-ի ընտրություններ	2 742	1 368	1 374
Վրաստանի նախագահի 2018 թվականի հոկտեմբերի 28-ի ընտրություններ	1 639	762	877
Վրաստանի խորհրդարանի 2020 թվականի հոկտեմբերի 31-ի ընտրություններ	1 579	861	718


Միաժամանակ կարևոր է նշել ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարոզչություն վարելու և ընտրական մշակույթի ուժեղացման նպատակով քաղաքացիական

²⁰Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թթ. գործնական պլանի կատարման ամփոփիչ գնահատում, www.smr.gov.ge

կազմակերպություններին և էթնիկ փոքրամասնությունների համայնքներին փոքր դրամաշնորհներ տրամադրելու ընթացակարգը: 2015-2020 թվականներին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների ընտրական գործընթացին մասնակցությանը օժանդակության նպատակով, ֆինանսավորվեց տեղական ոչկառավարական կազմակերպությունների շուրջ 74 նախագիծ, որոնց բյուջեն կազմեց 2 000 000 լարիից ավելի: Նախագծերի իրականացման աշխարհագրական տարածման տարածքը լրիվությամբ ներառում էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջանները:

Դեռևս ցածր է նրանց ներկայացուցչության ցուցանիշը երկրի քաղաքական ինստիտուտներում: Հատկանշական է, որ 2016 թվականին ընտրված Վրաստանի խորհրդարանում էթնիկ փոքրամասնությունները ներկայացված էին 11 անդամով (ինչը պատգամավորների ընդհանուր թվաքանակի 7.33%-ն է), իսկ 2020 թվականին խորհրդարանական ընտրությունների արդյունքներից ելնելով, խորհրդարանում էթնիկ փոքրամասնությունների 6 ներկայացուցիչ է²¹: Համապատասխանաբար, տասներորդ գումարման խորհրդարանում, նախորդ գումարման խորհրդարանի համեմատությամբ, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ պատգամավորների թվաքանակը 3.33 %-ով կրճատվեց:

Դիագրամ. 2020 թվականի խորհրդարանի ընտրությունների արդյունքների համաձայն տասներորդ գումարման խորհրդարանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ պատգամավորների թվաքանակ



²¹ Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թթ. Գործնական պլանի կատարման ամփոփիչ գնահատում, www.smr.gov.ge

Տեղական ընտրովի մարմիններում 2017 թվականի ընտրությունների արդյունքում (64-ից 21 մունիցիպալիտետում) ընտրված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 165 անձ, յուրաքանչյուր մունիցիպալիտետից առնվազն մեկ թեկնածու, ինչը նշանակում է, որ էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների ինքնակառավարումներում փոքրամասնությունների ներկայացուցչությունը ցածր է: Մասնավորապես, տեղական սակրեբուլյում մեկական ներկայացուցիչ ունի միջին հաշվով 779 վրացի ընտրող: 1116 ազգությամբ հայ ընտրող և միջին հաշվով 2945 ազգությամբ ադրբեջանցի ընտրող ունի միջին հաշվով մեկական ներկայացուցիչ:²² Ելնելով դրանից կառավարման և քաղաքական որոշումների ընդունման գործընթացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը խոչընդոտող գործոն հաճախակի դեպքերում անվանվում է պետական լեզվի ոչպատշաճ իմացությունը և, համապատասխանաբար, ցածր շարժառիթը:

Ընդգրկման բարելավման նպատակով 2016 թվականից Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում պետական լիազոր-նահանգապետերի վարչություններին առընթեր գործարկված են հասարակական խորհրդակցական խորհուրդներ, որոնց կազմի մեջ մտնում են տեղական ինքնակառավարումների, ժողովրդական պաշտպանի և ոչկառավարական կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Անցած տարիների ընթացքում տեղի ունեցավ խորհուրդների 19 հանդիպում: Խորհրդակցական խորհուրդների ձևավորումը և գործարկումը, ինչը նախատեսում է էթնիկ փոքրամասնությունների ընդգրկում տեղական մակարդակով, առաջընթաց քայլ է, թեև նշված խորհուրդների գործունեությունն ունի մասնակիորեն ձևական բնույթ և տարբեր հարցերի քննարկման տեսակետից հետագա զարգացման և կատարելագործման կարիք ունի: Դրա հետ միասին նշանակալից է հիմնախնդիրների նույնականացման և առաջնահերթությունների սահմանման մեջ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ավելի լայն ընդգրկման ապահովումը և նրանց կողմից ներկայացված հանձնարարականների խորքային վերլուծումը:

Հանրային ծառայությունում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների ընդգրկման, նրանց որակավորման բարձրացման, մրցունակության աճի և վերջին հաշվով, սոցիալ-տնտեսական ինտեգրման աջակցության նպատակով պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ, 2017 թվականին երիտասարդներին (այսպես կոչված, «1+4 կրթական ծրագրի» շահառուներին) փորձարկման՝ պիլոտային ռեժիմում հնարավորություն տրվեց հանրային կառույցներում անցնելու ստաժավորում: Նույն տարում

²² http://csem.ge/wp-content/uploads/2018/06/Competing-for-Votes-of-Ethnic-Minorities_Geo.pdf?fbclid=IwAR1PUZUszKp7ghbK3KvnhQ-4k_SMgik3bWtmFi8uO55E5KqFzBbBIOWWpDk

իրականացվեց ծրագրի ինստիտուցիոնալիզացումը: Ծրագիրը հաջողությամբ անցավ շուրջ 300 երիտասարդ:

3.5.Մեդիայի և տեղեկատվության մատչելիություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքական սոցիալականացման և ընդհանրապես, քաղաքացիական ինտեգրման գործընթացում առանձնահատուկ դեր է շնորհվում մեդիայի մատչելիության ապահովմանը: Այս համատեքստում կարևոր է նրանց հասկանալի լեզուներով տեղեկատվության մատչելիության բարելավումը և միասնական տեղեկատվական տարածքում ընդգրկման աջակցությունը, ինչը առանձնահատուկ բեռնվածություն է ձեռք բերում ապատեղեկատվության և ընթացիկ քարոզչության ֆոնի վրա: COVID-19-ի համաճարակով ստեղծված մարտահրավերները էլ ավելի հրատապ դարձրին էթնիկ փոքրամասնությունների գիտակցականության բարձրացման հարցը, նրանց համար տեղեկատվությունը ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզվով այլընտրական ճանապարհներով մատուցելու անհրաժեշտությունը, ինչպես նաև մեդիա-գրագիտության բարձրացման և ապատեղեկատվության կանխարգելման համար նպատակային ծրագրերի իրականացումը, տարածաշրջաններում համացանցերին և ժամանակակից տեխնոլոգիաներին հասանելիության բարելավումը:

Ընդհանուր ազգային և ժողովրդավարական արժեքների տարածման և հաստատման համար օրակարգում դրված է պետությունում ընթացող սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացների մասին տեղեկատվության, մեդիա-հաղորդակցական միջոցներով էթնիկ փոքրամասնությունների թեմայի լուսաբանման և պետության զարգացման համար առանձին ազգերի ներկայացուցիչների գործունեության ժողովրդականացման, համապատասխան մեդիաարտադրանքներով հանդուրժողականության և մշակութային պլուրարիզմին աջակցության անհրաժեշտությունը:

«Հեռարձակման մասին» Վրաստանի օրենքի 16-րդ հոդվածը պարտավորեցնում է Հանրային հեռարձակմանը «ծրագրերում արտացոլել հասարակությունում գոյություն ունեցող էթնիկական, մշակութային, լեզվական, կրոնական, տարիքային և գենդերային բազմազանությունը»: Համապատասխանաբար, նշված ինստիտուցիան տեղեկատվության տարածման տեսանկյունից առաջատար գործոն է, որն իրականացնում է լրատվական հաղորդումների հեռարձակում վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Նույնպես Հանրային հեռարձակումն ապահովում է կայք-հարթակի՝ www.1tv.ge-ի յոթ լեզվով (վրացերեն, արխազերեն, օսերեն, հայերեն, ադրբեջաներեն, անգլերեն և ռուսերեն) գործունեությունը:

2017 թվականին էթնիկ փոքրամասնությունների մեդիայի մատչելիությունը բարձրացնելուն աջակցության համար Հանրային հեռարձակումը մշակեց հատուկ մեդիա ռազմավարություն,

որի նպատակն է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին նրանց հասկանալի լեզվով մատակարարել տեղեկատվություն, միաժամանակ օժանդակել վրացալեզու բնակչության շրջանում էթնիկ փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների ժողովրդականացմանը և երկրի կյանքում նրանց դերի և մասնակցության նշանակության ներկայացմանը:

Այդ նպատակով պետությունը ֆինանսավորման ճանապարհով տարիների ընթացքում շարունակում է տպագիր մեդիային աջակցությունը: Կանոնավոր կերպով հրատարակվում են հայալեզու «Վրաստան» և ադրբեջանալեզու «Գյուրջիստան» թերթերը, որոնք տարածվում են ամբողջ Վրաստանով մեկ, հատկապես էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում, ինչպես նաև քրեակատարողական և պրոբացիայի հիմնարկություններում: 2015-2019 թվականներին լույս տեսան հայալեզու «Վրաստան» (2016 - ամենամյա 52 համար, 4000 օրինակ տպաքանակով, 2017-2019 թվականներին ամենամյա 102 համար, 3500 օրինակ տպաքանակով) և ադրբեջանալեզու «Գյուրջիստան» (2016 թ. – ամենամյա 52 համար, 4000 օրինակ տպաքանակով, 2017-2018 թվականներին, ամենամյա 52 համար, 2000 օրինակ տպաքանակով, 2019 թվականին ամենամյա 52 համար, 2000 օրինակ տպաքանակով) թերթերը: Տարեկան վիճակագրության համաձայն, ամրագրվում է թերթերի համարների քանակի աճ: Պետության կողմից նույնպես ապահովված է կայուն ֆինանսական աջակցություն:

Չնայած նշված միջոցառումներին, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տեղեկատվության մատչելիության տեսանկյունից մի շարք հիմնախնդիրներ դեռևս լուծման կարիք ունեն: Այդ թվում Հանրային հեռարձակման և տարածաշրջանային հեռուստատեսությունների ակիքներով, ազգային փոքրամասնությունների համար հասկանալի լեզվով մատուցված տեղեկատվությունը բավարար չէ, մատուցման որակը և ինտեսիվությունը բարելավման կարիք ունի: Մունիցիպալային կենտրոնից հեռու գտնվող առանձին գյուղերում տեղեկատվության հիմնական աղբյուր վերստին մնում են հարևան երկրների հեռուստատեսային հաղորդման ազդանշանը, միաժամանակ բնակչության համար հասկանալի լեզվով թարգմանված հաղորդումները նրանց տեղեկատվական հետաքրքրասիրությանը և պահանջին, մեծ մասամբ, չեն բավարարում: Արդյունքում տեղեկատվություն ստանալու համար գերադասում են օտար երկրի այլընտրական տեղեկատվական ակիքները, ինչը մեծ մասամբ բացասական ազդեցություն է գործում նրանց վերաբերմունքին երկրում ընթացող գործընթացների նկատմամբ, ամբողջությամբ ինտեգրման գործընթացների վրա և արգասաբեր հիմք են ստեղծում ապալրատվության տարածման համար:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկվածությունը և գիտակցականության բարձրացումը այնպիսի հարցերում, ինչպիսիք են մարդու

իրավունքները և ազատությունները, եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացները, պետական ծրագրերը և սպասարկումները, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականությունը, կրթության հնարավորությունները և աջակցության ծրագրերը, գենդերային հիմունքների վրա հիմնված բռնությունն ու վաղ ամուսնությունը, ապալրատվությունը և կիրեռանվտանգությունը, հակախտրականության մեխանիզմները և այլն, կարևոր լծակ են քաղաքացիական ինտեգրման գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Տեղեկատվության մատչելիության բարելավման նպատակով պետական գերատեսչությունների կողմից տարիների ընթացքում լայնամասշտաբ տեղեկատվական և գիտակցականության բարձրացման ընթացակարգեր են անցկացվում, որոնց շրջանակներում բնակչությանը մատուցվում է տեղեկատվություն. կրթության, գյուղատնտեսության, բնապահպանության, առողջության և սոցիալական պաշտպանության, տնտեսության, ֆինանսական պարտականությունների, Վրաստանի եվրոպական ընտրության և դրա շահավետության, օրենսդրության, ատելությամբ մոտիվացված հանցագործությունների, գենդերային հավասարության և այլ հրատապ հարցերի մասին: Նշված ակտիվություններն ունեն կանոնավոր ընթացակարգային բնույթ: Թեև առանձնաձևում է գործընթացներում լրացուցիչ տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների ընդգրկումը բարձրացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ուղիղ հաղորդակցության, զանգվածային լրատվության միջոցների և ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ճանապարհով տեղեկատվության ինտենսիվ և արդյունավետ մատակարարման-տարածման անհրաժեշտությունը:

3.6. Սոցիալ-տնտեսական պայմաններ և հնարավորությունները

Քաղաքացիական ինտեգրման տեսանկյունից նշանակալից է երկրի բոլոր քաղաքացիների համար հավասար սոցիալ-տնտեսական հնարավորությունների ստեղծումը: Այս նպատակով կարևոր է երկրի էթնիկ փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական նախաձեռնություններին աջակցությունը, ինչպես նաև համապատասխան պետական ծրագրերի և սպասարկումների հասանելիության բարելավումը:

Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու սոցիալ-տնտեսական հավասարությունը երաշխավորված է օրենսդրությամբ: Թեև, մի շարք դեպքերում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները տնտեսական իրավունքների իրացման և սոցիալական բարիքներից օգտվելու տեսանկյունից հանդիպում են խոչընդոտների պետական լեզվի չիմացության, աշխարհագրական գործոնների և տեղեկացվածության ցածր մակարդակի պատճառով: Նշանակալից է այնպիսի սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացումը, որոնք կպատասխանեն էթնիկ փոքրամասնությունների կարիքներին, միննույն ժամանակ կտան

նրանց հնարավորություններ էլ ավելի գործնական կապեր հաստատելու վրացալեզու բնակչության հետ միասնական սոցիալ-տնտեսական նախագծեր իրականացնելու ճանապարհին:

Վերջին տարիներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում նշանակալիորեն ավելացավ իրականացված պետական նախագծերի քանակը, փոքր և միջին բիզնեսի զարգացման և գյուղատնտեսական գործունեությանը օժանդակող ծրագրերի և սպասարկումների մատակարարումը: Տեղում առկա հիմնախնդիրների լուծումն ընթանում է մասշտաբային ենթակառուցվածքային նախագծերի իրականացմամբ, ինչպիսիք են. գյուղերի գազիֆիկացումը, գյուղամիջյան ճանապարհների, ռոռոգման և խմելու ջրի համակարգերի բարելավումը, դրսի լուսավորության վերականգնումը և այլն: Իրականացվեցին մի շարք ծրագրեր և նախագծեր նախադպրոցական հաստատությունների, դպրոցների, ամբուլատորիաների շինարարության և վերականգնման ուղղությամբ: Էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում պետության կողմից ֆինանսավորված ենթակառուցվածքային նախագծերի թվաքանակը վկայում է այդ հարցերում պետության ջանքերի մասին, որոնք ուղղված են նշված տարածաշրջանները նշանակալիորեն բարելավելուն, էլ ավելի բարձրացմանը և նոր ներդրումներ իրականացնելուն և այնտեղ բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական հնարավորությունները բարձրացնելուն: 2015-2020 թվականներին Սամցխե-Ջավախեթիում իրականացված ենթակառուցվածքային նախագծերի (տարածաշրջաններում իրականացված նախագծերի հիմնադրամի շրջանակներում) գումարային արժեքը կազմում էր 136 929 861 լարի, Քվեմո Քարթլիում՝ 191 772 326 լարի, իսկ Կախեթիում՝ 46 801 486 լարի: Միաժամանակ էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ մունիցիպալիտետների բարձրալեռ գյուղերում, «Բարձրալեռ բնակավայրերի զարգացման» հիմնադրամի շրջանակներում իրականացված նախագծերի գումարային արժեքը կազմում էր. Սամցխե-Ջավախեթիում՝ 11 050 214 լարի, Քվեմո Քարթլիում՝ 3 141 601 լարի, իսկ Կախեթիում՝ 1 854 340 լարի:

Պետական սպասարկումների, ծրագրերի և նորույթների մասին տեղեկատվական գիտակցականության բարձրացման ընթացակարգերին հաղորդվեց կանոնավոր բնույթ, այդ թվում դռնեղուռ սկզբունքով և բնակչության հետ երես առ երես երկխոսության և խորհրդատվությունների ճանապարհով: Պետական գերատեսչությունները սոցիալական և տնտեսական ուղղության սեկտորային ռազմավարությունների մշակման և ծրագրերի իրականացման ժամանակ նկատառում են էթնիկ փոքրամասնությունների կարիքները:

Տարածաշրջանների բնակչության սոցիալ-տնտեսական ամրապնդման տեսանկյունից վերջին տարիներին մեծ նշանակություն է տրվում զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացմանը, տեղական արտադրության, ձեռքի աշխատանքի և ստեղծագործական մշակույթի աջակցությանը, փառատոնային և ցուցահանդեսային հնարավորությունների կարողության իրացմանը: Նշված հարցը վերջին տարիներին հրատապ դարձավ նաև էթնիկ

փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում: 2018 թվականին, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության ՀԻԻԱ «Նորությունների և տեխնոլոգիաների գործակալությունը» «Համացանցը՝ զարգացման համար» ծրագրի շրջանակներում սկսեց ինտերնետ վաուչերների տրամադրումը: Էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Կախեթի, Սամցխե-Ջավախեթի) ընդհանուր առմամբ տրվել է 126 միավոր 150-լարիանոց վաուչեր:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական հզորացման հասնելու համար մեծ նշանակություն է տրվում ճշգրտված վիճակագրական տվյալների կիրառմանը: Ապացույցների վրա հիմնված քաղաքականության իրականացման տեսանկյունից մարտահրավեր է ներկայացնում վիճակագրական տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը և քաղաքացիների մարդահամարի բանաձևումները, որոնք չեն տալիս հնարավորություն էթնիկ փոքրամասնությունների վիճակագրական տվյալների մասին տեղեկատվություն ստանալու և ընթացիկ գործընթացների դինամիկայի վերլուծության համար: Օբյեկտիվ և մատչելի տվյալների առկայությունը հատկապես կարևոր է զբաղվածության հիմնախնդիրների վերլուծության և կարգավորման, տարածաշրջանի տնտեսական զարգացման վիճակագրական պլանավորման համար: Այս ուղղությամբ ծառայած է պաշտոնական վիճակագրության համակարգի կարգավորման և զարգացման ապահովման միջոցառումների անցկացման անհրաժեշտությունը:

3.7. Միջմշակութային երկխոսություն

Բազմազգ հասարակությունում, որը մշտապես ենթարկվում է ձևափոխությունների, մեծ նշանակություն է տրվում հանդուրժողականությանը և տարբերվողների նկատմամբ հարգանքին: Ժողովրդավարական, մարդու իրավունքներին և հավասարությանը կողմնորոշված արժեքները հաստատելու համար կատարվեցին կարևոր քայլեր, թեև իրականացված հետազոտությունները վկայում են, որ Վրաստանի քաղաքացիների 37.36%-ը, ելնելով համապատասխան տեղեկատվության սակավությունից, էթնիկական բազմազանության կապակցությամբ չունի դրական վերաբերմունք²³: Համապատասխանաբար կարևոր է ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում օժանդակել գիտակցականության բարձրացմանը:

Իրավահավասար և հանդուրժողական միջավայր հաստատելու տեսանկյունից ծառայած է միջմշակութային երկխոսության օժանդակության, Վրաստանում բնակվող էթնոսների

²³ Caucasus Research Resource Centres (CRRG-Georgia), „Hate Crime, hate speech and discrimination in Georgia, Attitudes and Awareness“, baseline study of the Council of Europe project „Fight against Discrimination, Hate Crimes and Hate Speech in Georgia“, November 2018

մերձեցման և միասնական քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացման անհրաժեշտությունը: Էթնիկ փոքրամասնությունների նույնականության և ինքնատիպության պահպանումը և աջակցությունը նշանակալից բաղադրիչ էր քաղաքացիական իրավահավասարության ռազմավարության իրականացման գործընթացում այնքանով, որքանով տարբեր էթնոսների սոցիալ-մշակութային նույնականությունը սահմանող արժեքները, նյութական և ոչնյութական մշակութային ժառանգության հուշարձանները, ավանդույթները ստեղծում են երկրի բացառիկ մշակութային բազմազանությունը, որի ժողովրդականացման որակը նույնպես նշանակալիորեն պայմանավորում է մեր բազմազգ հասարակությունում հանդուրժողական տրամադրությունների և փոխադարձ հարգանքի հաստատումը: Այս նպատակով պետությունը ֆինանսավորում է թատրոնների, թանգարանների, մշակութային կենտրոնների գործունեությունը, իրականացվում են այնպիսի նախագծեր, ինչպիսիք են. պլումների և թարգմանությունների հրատարակումը, գրական-մշակութային երեկոների անցկացումը, «Բազմազգ Վրաստան», «Բազմազգ արվեստի փառատոն մեկ երկնքի տակ – մշակույթների երկխոսություն», «Բոլոր մշակույթները տարբեր, բայց հավասար են» և այլ փառատոների անցկացումը, որոնք ուղղված են ազգային մշակույթների ժողովրդականացմանը և աջակցությանը:

Էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանության նպատակով ընթանում է հուշարձանների գույքագրում-հաշվարկ, վերականգնում և մշակութային ժառանգության հուշարձանի կարգավիճակի շնորհում: Պետության կողմից ֆինանսավորվել են էթնիկ փոքրամասնությունների մշակույթն արտացոլող հաստատություններ, այդ թվում թանգարաններ, թատրոններ, գրադարաններ և մշակութային կենտրոններ: Թեև միջմշակութային երկխոսության խթանման նպատակով անհրաժեշտ է նշված ուղղությամբ գործունեության էլ ավելի ուժեղացում և տարբեր ազգերի ներկայացուցիչների համատեղ ընդգրկման ապահովումը:

3.8. Գենդերային հավասարություն

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական քաղաքականության իրականացման գործընթացում գենդերային նշանով խտրականության դեմ պայքարը, հասարակական հայացքների ձևափոխումը, կանանց մասնակցության աճը որոշումներ ընդունելու գործընթացում և քաղաքական կամ սոցիալ-տնտեսական ոլորտներում դիտվում է որպես միջանցիկ առաջնահերթություն: Համապատասխանաբար էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց ուժեղացումը քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման կարևոր տեսանկյուններից մեկն է:

Գենդերային հիմնադրույթը՝ հիմնականում աղջիկների և կանանց կրթությունը, միջնակարգ և բարձրագույն կրթություն ստանալը դեռևս գոյություն ունեցող պատնեշների և

քաղաքացիական-քաղաքական գործընթացներում մասնակցության տեսանկյունից է դրսևորվում, ինչը մեծ մասամբ կապվում է կարծրատիպերի ազդեցության, մարդու իրավունքների և զարգացման բազմազանության հնարավորությունների մասին տեղեկատվության սակավության հետ: Ուսման աստիճանների համաձայն համաչափությունների փոփոխությունը նկատելի է աղբբեջանալեզու դպրոցներում: Եթե բազային աստիճանին աղբբեջանալեզու դպրոցներում աղջիկները կազմում էին 47,2%, արդեն միջնակարգ կրթության աստիճանին նրանց բաժինը կրճատվել է մինչև 42.10%:

Դպրոցների կողմից նույնականացված են բազում դեպքեր, երբ ծնողները խոչընդոտում են աղջիկների բարձրագույն կրթություն ստանալուն: Թեև որպես հանրային կրթություն ստանալու գործընթացները խոչընդոտող գործոն է դրսևորվում միջին աստիճանին ուսումը դադարեցնելու առանձնապես բարձր ցուցանիշը վաղ ամուսնության կամ ընտանիքի որոշման պատճառով, ինչը բացասաբար է անդրադառնում ինչպես աղջիկների առողջության, այնպես էլ հետագա կրթության և զարգացման, կարողության իրացման և հետագա տնտեսական ակտիվության վրա:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց մեծ մասը ունեցվածքով և տնտեսապես ընտանիքից կախվածության մեջ է: Արմատավորված ավանդույթներին համապատասխան, նրանք հազվադեպ են հայտարարում բողոք ընտանիքի ունեցվածքից և ժառանգությունից բաժին ստանալու մասին:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց քաղաքական և քաղաքացիական ընդգրկման ուժեղացման, գույքային և տնտեսական անկախության հնարավորություններ ստեղծելու համար մեծ նշանակություն է տրվում նրանց կրթությանը և տնտեսական ու բիզնես ակտիվություններին աջակցությանը: Կանանց ուժեղացումը ապահովում է նրանց իրավունքների պաշտպանությունը, ֆինանսների և այլ ռեսուրսներին հասանելիության բարելավումը, ազատ ընտրության իրավունքի իրացումը և զարգացումը:

Վերջին տարիների ընթացքում պետությունը նշանակալից ուշադրություն է հատկացնում կանանց ուժեղացմանը՝ նրանց իրազեկվածության, տարբեր ակտուլ հարցերի մասին գիտակցության բարձրացման ուղիով: Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակվող մունիցիպալիտետներում գործարկվեցին «Կանանց սենյակները» որպես կանանց աջակցության մեխանիզմ, որի շրջանակներում էլ կանոնավոր կերպով տեղի են ունենում հանդիպումներ կանանց իրավունքների, վաղ ամուսնությունների, ընտանիքում բռնության և գենդերային հավասարության թեմաներով: Նույն մունիցիպալիտետներում հատուկ պատրաստության դասընթաց անցավ շուրջ 100 քննիչ ընտանիքում բռնության և ընտանեկան հանցագործությունների արդյունավետ հետաքննության տեսանկյունից:

Համապատասխանաբար, արտակարգ կարևոր է գենդերային նշանով անհավասարության վերացման նպատակով կանանց իրավունքների պաշտպանության աջակցությունը, նրանց

տնտեսական և հասարակական կյանքին ակտիվ մասնակցության աջակցությունը և խրախուսումը, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ կարիքների վրա հիմնված գործնական պլանի մշակումը և դրա արդյունավետ իրականացումը:

3.9. ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐԻՆՆԵՐԻ ՈՒ ՄԵՌԱՆԻՋՄԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար պետական վարչարարության, իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիությունը ապահովում է իրավահավասար և արդարացի միջավայրի ստեղծում, նրանց կողմից այս մարմինների նկատմամբ վստահության ուժեղացում և համագործակցության պատրաստակամություն:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար պետական վարչարարության վարույթի, հետաքննության և դատարանների արդյունավետ մատչելիության ապահովման տեսանկյունից հաճախակի դեպքերում պատնեշ են անվանում պետական լեզվի ոչպատշաճ իմացությունը և թարգմանության թերությունները, ինչը նշանակալի խոչընդոտ է հանդիսանում իշխանության մարմինների համար այնպիսի իրավական հարաբերությունների հաստատման գործընթացում, ինչպիսին է վարչական վարույթի նախաձեռնումը, արդարադատության իրականացումը և այլն: Համապատասխանաբար իշխանության տարբեր մարմինների հետ հարաբերությունը բարելավելու նպատակով իրականացվեցին կարևոր միջոցառումներ, որոնք մեծ մասամբ օժանդակեցին գոյություն ունեցող պատնեշները հանելուն, թեև այս ուղղությամբ անհրաժեշտ է գործադրել ավելի շատ ջանքեր:

Հստակեցվել է իրավապահ մարմիններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցչության ուժեղացման անհրաժեշտությունը: Գործնական պլանով պետությունը ստանձնել է պարտականություն իրավապահ մարմիններում ներգրավել էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների:

Չնայած այն բանին, որ վերջին տարիներին էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ մունիցիպալիտետի ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և տարբեր մասնագիտություն ունեցող անձանց ընդգրկումը զգալիորեն բարձրացավ ՀԻՄ «Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի» նպատակային ծրագրերում, այնուամենայնիվ դեռևս ցածր է մասնակցության ընդհանուր ցուցանիշը:

3.10. Երիտասարդության մասնակցություն

Երիտասարդության դերը կարևորագույն է երկրի զարգացման գործընթացում: Դա այն ուժն է, որը ստեղծում է ապագա, միտված է դեպի նորույթներ և զարգացում: Իսկ արդյունքում նշանակալից ավանդ է մտցնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում:

Երիտասարդների կարողության լրիվությամբ իրացման, նրանց զարգացումն ապահովելու և բարօրության հասնելու, ավելի լավ ապագայի հեռանկարի համար անհրաժեշտ է պատշաճ պայմանների ստեղծում:

Նշվածի առնչությամբ կարևոր մարտահրավերներ են դիտարկվում հետևյալ հարցերը. էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների հասարակական կյանքում և ժողովրդավարական գործընթացներում նվազ ընդգրկվածությունը, զբաղվածության հիմնախնդիրը, մատչելի մասնագիտական կրթական հաստատությունների սակավությունը, ոչձևական կրթության և երիտասարդական գործունեության ծրագրերի ոչհամարժեք մատչելիությունը, տարածաշրջաններում կուտակման, մշակութային և սպորտային ակտիվությունների, զվարճության և հանգստի համար անհրաժեշտ տարածությունների պակասը:

Նույնպես որպես մարտահրավեր են մնում այնպիսի մշակութային և սպորտային ակտիվությունները, որոնցում ընդգրկված կլինեն տարբեր ազգերի ներկայացուցիչ երիտասարդները համատեղ, ինչը դրական ազդեցություն կգործի նրանց առողջության և կյանքի որակի, մերձեցման և փոխադարձ հարգանքի վրա և վերջապես կօժանդակի քաղաքացիական ինտեգրման գործընթացին:

Միննույն ժամանակ անհրաժեշտ է ավելանա ծրագրերի քանակը և բարձրանա դրանց որակը, որը երիտասարդներին կտա հանգուցային, այդ թվում ձեռներեցային իրավասությունների զարգացման հնարավորություն: Այն երիտասարդների համար, ովքեր ցանկանում են ձեռներեցային գործունեությունում դառնալ հաջողակ, առաջարկեն մասնագիտական վերապատրաստման և վարժանքային ծրագրեր, օժանդակեն գյուղատնտեսական նախագծերի իրականացման, ձեռներեցային գործունեություն սկսելու, ժամանակակից և նորացված տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև ազգային մշակութային արտադրանքների ստեղծման և ժողովրդականացման մեջ: Ոչձևական կրթության ենթատեքստում նրանց կօգնեն միջանկյալ ունակությունների (լիդերություն, հաղորդակցություն, թիմային աշխատանք, քննադատական մտածողություն, հիմնախնդիրների վճռում և այլն) զարգացման մեջ:

IV. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏԵՍԼԱԿԱՆ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ և ԱՐԺԵՔՆԵՐ

Վրաստանի իշխանության, այդ թվում պետական նախարարի աշխատակազմի տեսլականը հիմնվում է ժողովրդավարական, հավասար և իրավահավասար հասարակության կառուցման

սկզբունքների վրա: Համապատասխանաբար սույն **ռազմավարության երկարաժամկետ տեսլականը** հիմնվում է ժողովրդավարական և իրավական պետության էության վրա, ինչը ենթադրում է իրավահավասարության, որպես հասարակության կարևորագույն արժեքներից մեկի ճանաչում և դրա արդյունավետ ապահովում, բոլոր պայմանների նկատառում այնպիսի միջավայրի ստեղծան համար, որտեղ պաշտպանված են էթնիկ բազմազան հասարակության յուրաքանչյուր անդամի ինքնատիպությունը և մշակույթը, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները ակտիվորեն և արդյունավետորեն մասնակցում են երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, թե մշակութային կյանքին: Ռազմավարության տեսլականը հենվում է երկրում առկա պատմական փորձի և ավանդույթների, քաղաքական և մշակութային համատեքստի, սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության վրա և համապատասխանում է երկրի ժողովրդավարական զարգացմանը և եվրաինտեգրման հեռանկարներին:

Ռազմավարության տեսլականն է հավասար, իրավահավասար, ինկլյուզիոն հասարակության հաստատումը: Կարևոր է երկրի զարգացման շահերից և առկա կարիքներից բխող, մեր բազմազգ հասարակության կարողությունները լիարժեքորեն իրացնելու համար արդյունավետ գործնական քաղաքականության սահմանում և իրականացում: Ռազմավարության ապագա տասնամյա տեսլականը հիմնադրված է նշված սկզբունքների վրա:

Ռազմավարության առաքելությունն է պետությունում հավասար, հանդուրժողական և բազմազան միջավայրի ապահովում և ամրապնդում տեղական և միջազգային փորձի, առկա ռեսուրսների և նորարարական մոտեցումների կիրառմամբ, հասարակության ընդգրկմամբ և գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: Էթնիկ փոքրամասնությունների առնչությամբ պետությունը պլանավորեց քաղաքականություն և իրականացնում է իրավունքների պաշտպանության, իրավահավասարության, ինկլյուզիայի, մշակութային բազմազանության սկզբունքներով և հեռանկարով: Քաղաքականությունը նախատեսում է ակտիվ ինտեգրում ոչ միայն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների, այլ նաև վրացալեզու բնակչության հետ:

Ռազմավարության հիմնական արժեքներ և սկզբունքներ

Սույն ռազմավարությունը հիմնվում է իրավական, սոցիալական և քաղաքական իրավահավասարության գաղափարի վրա հիմնադրված հասարակությանը բնութագրական հիմնական սկզբունքների վրա և կիսում է համընդհանուր ճանաչված համապարփակ արժեքները: Մասնավորապես, դրանք են.

- ❖ օրենքի գերակայություն,
- ❖ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանություն,

- ❖ իրավահավասարություն և հավասար կարողություններ,
- ❖ արդարադատություն, թափանցիկություն և համակարգում,
- ❖ մշակութային բազմազանություն,
- ❖ ինկլյուզիացիա,
- ❖ պատասխանատավություն և հաշվետվություն,
- ❖ երկրի ամրապնդման և զարգացման մեջ ներդրում:

Ռազմավարության թիրախային խմբեր

- ❖ Վրաստանի քաղաքացիներ, առանց ազգային պատկանելության խտրականության,
- ❖ պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ, որոնց գործունեությունը կապված է ռազմավարությամբ սահմանված խնդիրների կատարման հետ,
- ❖ տեղական ինքնակառավարության ներկայացուցիչներ,
- ❖ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ,
- ❖ միջազգային գործընկերներ,
- ❖ փորձագետներ, ակադեմիական շրջանների ներկայացուցիչներ և այլ շահագրգռված անձինք:

V. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՂԻՐՆԵՐ

Էթնիկ փոքրամասնությունների լիարժեք ինտեգրման և քաղաքացիական իրավահավասարության հասնելու համար իրավիճակային վերլուծության հիման վրա սահմանվեցին նպատակները և պլանավորվեցին խնդիրները ռազմավարական առաջնահերթություններին համապատասխան:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ 1 – ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԶԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պետական լեզվի իմացությունը ամենակարևոր նախապայմաններից մեկն է և անհրաժեշտ գործոնը երկրում ժողովրդավարական գործընթացների ուժեղացման և բազմազգ հասարակության լիարժեք ինտեգրման համար: Մասնավորապես, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների երկրի զարգացման գործընթացում ակտիվ մասնակցության, նրանց, որպես բարձր որակի մարդկային կապիտալի զարգացման, տեղեկատվության մատչելիության, քաղաքական մասնակցության, զբաղվածության, պետական ծրագրերին ընդգրկման և սպասարկումների արդյունավետ հասանելիության, երկրում բնակվող տարբեր ազգերի միջև հաղորդակցության ապահովման և մշակույթի ու

ավանդույթների փոխանակման համար: Ճիշտ այդ պատճառով վրաց լեզվի ուսուցումը դիտարկվում է որպես քաղաքացիական իրավահավասարության քաղաքականության առաջնային գերակայություն:

Համապատասխանաբար, սույն ռազմավարության առաջին գերակայությունը՝ **պետական լեզուն ինտեգրման աջակցության համար**, նախատեսում է պետական լեզվի կարգավիճակի ամրապնդում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում՝ պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման և հանրային տարածքում կիրառմանը աջակցության ճանապարհով: Կշարունակվի **աջակցությունը** պետական լեզվի **ուսուցմանը**, որը հաստատված պրակտիկայի և ընթացիկ ծրագրերի առնչությամբ էլ ավելի մասշտաբային, պրագմատիկ, շարունակական, չափորոշմանը համապատասխան և խրախուսմանը կողմնորոշված կլինի ինչպես ձևական, այնպես էլ չափահասների և ոչձևական կրթության մասում:

Պետական լեզվի ուսուցման ուժեղացման նպատակին հասնելու համար, կանխագծվեցին խնդիրներ ինչպես կրթության ամեն մի աստիճանի վրա (նախադպրոցական, հանրային, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ) այնպես էլ չափահասների և ոչձևական կրթության ծրագրերում, պետական լեզվի ուսուցման բարելավման նոր մոտեցումներ արմատավորելու նպատակով: Ռազմավարության շրջանակներում սահմանված ամեն մի խնդիր ծառայում է պետական լեզվի ուսուցմանը՝ ելնելով ինտեգրման հեռանկարից:

2019 թվականին անցկացված հետազոտության²⁴ արդյունքները ցույց տվեցին, որ միայն պետական լեզվի բազիսային հաղորդակցական բաղադրիչները բավարար չեն պետական լեզվի իմացության տեսակետից էական փոփոխությունների հասնելու և միասնական պետական տարածքում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների լիարժեք ինտեգրման համար: Այդ պատճառով, «Վրաստանի կրթության և գիտության ռազմավարություն 2022-2030-ում» նախատեսված կլինի էթնիկ փոքրամասնությունների կրթության քաղաքականության լայնամասշտաբ, համախմբված և համապարփակ հայեցակարգային տեսլականը, որը հիմնվում է միասնական համալիր քաղաքականության անցկացման և անընդմեջ կրթական շղթայի ստեղծման վրա՝ սկսած նախադպրոցական կրթությունից, հանրային, մասնագիտական, բարձրագույն կրթության ընդգրկմամբ և ավարտված չափահասների կրթությամբ: Ծրագրվեց համալիր միջոցառումների իրականացում, որպեսզի նախադպրոցական ընդհանուր կրթության փուլերում սկսվի պետական լեզվի ուսուցումը համապատասխան մեթոդաբանությամբ և բարելավվեն առկա մոտեցումները. ուսումնական ծրագրերի, ռեսուրսների որակի (այդ թվում վրացերենի, որպես

²⁴ Պետական լեզվի ուսումնական ծրագրի արդյունավետության հետազոտություն, Ժվանիայի դպրոց, 2019 թ.:

երկրորդ լեզվի դասագրքերի), համապատասխան որակավորման մանկավարժներով ապահովում և ուսուցման մեթոդիկայի բարելավմանը զուգահեռ վրաց լեզվի ուսումնական ծրագրերում սահմանված **ինտեգրման բաղադրիչի**, որպես միջանկյալ թեմայի ինտեգրում, ինչպես նաև վրաց լեզվով խոսակցական գործնական բաղադրիչի ուժեղացում:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ չափահաս բնակչության համար, որոնք տարբեր օբյեկտիվ հանգամանքների պատճառով չեն կարողացել սովորել վրաց լեզու, բայց ներկայումս ունեն ցանկություն սովորելու պետական լեզուն, ձևական կրթության համակարգում ՀԻԻՍ «Ձուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոց»-ում ինչպես դասարանային, այնպես էլ հեռավար և հիբրիդային ծրագրերի շրջանակներում, գործող ուսումնական կենտրոնների և բնակչության վայրի համաձայն մանկավարժների մոբիլ խմբեր առաքելու միջոցով, ապահովվում է պետական լեզվի ուսուցման դասընթացի ուղղորդումը համապատասխան անհրաժեշտությամբ: Պետական լեզվի ուսուցման ծրագրի մոդիֆիկացման արդյունքում դպրոցի կողմից կպատրաստվի և կներդրվի ինտեգրման բաղադրիչ: Մասնավորապես, ինտեգրմանն աջակցության այնպիսի ծրագրեր և ակտիվություններ, որոնք կօժանդակեն տարբեր տարիքի մարդկանց պետական լեզուն սովորելու, մասնագիտական բառապաշար տիրապետելու, դասասենակներից դուրս, իրատեսական միջավայրում վրաց լեզուն կիրառելու և նրանց մասնագիտական տարածքում ինտեգրվելու, համատեղ նախագծեր իրականացնելու գործում:

Միաժամանակ ջանքերը ուղղված կլինեն այնպիսի ծրագրերի նախաձեռնության և իրականացման վրա, որոնք կօժանդակեն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում **պետական լեզվի ժողովրդականացմանը** և պետական լեզվի **գործածությանն աջակցությանը** նպատակային ակտիվություններով: ոչվրացալեզու անձանց համար պետական լեզվի իրավասությունների ուժեղացման նպատակով մրցույթների, ճամբարների, փոխանակման ծրագրերի և այլ միջոցառումների իրականացմամբ: Նույնպես ուշադրությունը կկենտրոնացվի պետական լեզվի կիրառմանը հանրային սեկտորում գործավարության մեջ: Կիրականացվի գովազդային պաստառների, շենք-շինությունների և առևտրական օբյեկտների վրա առկա գրությունների մշտադիտարկում: Կմշակվեն և կիրականացվեն համապատասխան ծրագրեր հանրային համակարգում զբաղված անձանց պետական լեզուն սովորելու նպատակով: Վրաց լեզուն սովորելու մոտիվացիայի բարձրացման համար աշխատանք կտարվի մի քանի ուղղություններով, մասնավորապես. պետական լեզվի իմացության նշանակության մասին գիտակցության բարձրացում, հաջողությամբ զբաղվածության հեռանկարների և մասնագիտական կապերի ապահովման համար լեզվի իմացության նշանակության գիտակցում, լեզուն սովորելու հնարավորությունների մասին տեղեկատվության տարածում և այլն:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ մունիցիպալիտետներում մոնիթորինգ կիրականացվի հանրային սեկտորում գործավարությունը պետական լեզվով վարելու, գովազդային պաստառների, հիմնարկությունների գրությունների, անվանումների, վերնագրերի և ճանապարհային երթուղիների և ցուցատախտակների վրա վրացերեն գրություն կիրառելու նպատակով: Գնահատում իրականացնելուց հետո, պետական լեզվի դեպարտամենտի կողմից կանցկացվեն օժանդակ միջոցառումներ, որոնք կնպաստեն լավագույն միջազգային պրակտիկայի հաշվառմամբ պետական լեզվի լիարժեք գործածությանը:

Հատկանշական է, որ այն տարածաշրջաններում, որտեղ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները խիտ են բնակվում, պետական լեզվի ուսուցման ուժեղացման հետ մեկտեղ, կբարելավվի փոքրամասնությունների մայրենի լեզվի ուսուցման որակը և կարիքներին համապատասխան աջակցություն կստանան երկլեզու կադրերի զբաղվածության և թարգմանության կիրառման հնարավորությունները:

Նպատակ 1: Պետական լեզվի ուսուցման ուժեղացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Խնդիր 1.1 Պետական լեզվի ուսուցման ուժեղացում և ժողովրդականացում ձևական կրթությունում (նախադպրոցական, ընդհանուր, մասնագիտական և բարձրագույն կրթություն):

Խնդիր 1.2 Պետական լեզվի իմացության ուժեղացում չափահասների և ոչձևական կրթությունում:

Նպատակ 2. Պետական լեզվի ժողովրդականացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում

Խնդիր 2.1. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջաններում պետական լեզվի ժողովրդականացում, գործածության աջակցություն և կիրառման մշտադիտարկում:

ՈՒՋՄՍՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ 2 – ՈՐԱԿՑԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը ինտեգրման կարևորագույն գործիքն է, որը մեծ մասամբ պայմանավորում է տարբեր ազգի ներկայացուցիչ քաղաքացիների շրջանում ազգային արժեքների տարածումը և նրանց սոցիալականացման որակը, ինչը երկրում քաղաքացիական իրավահավասարության

մշակույթի բարձրացմանը ցուցաբերում է նշանակալի աջակցություն: Կրթությունը ամեն մի քաղաքացու հնարավորություն է տալիս ստանալու համապատասխան գիտելիք և տեղեկատվություն, ստեղծելու վերաբերմունքներ և զարգացնելու այն ունակություն-սովորությունները, որոնք օժանդակում են սեփական կարողության իրականացման, տնտեսական բարօրության հասնելու և երկրում ընթացող գործընթացներում լիարժեք մասնակցություն ունենալու գործում: Համապատասխանաբար կրթության բոլոր աստիճաններին՝ նախադպրոցական, միջնակարգ, մասնագիտական, բարձրագույն, ինչպես նաև չափահասների և ոչձևական կրթության մատչելիության և որակի շարունակական բարձրացումը ներկայացնում է սույն ռազմավարության առաջնահերթությունը:

Որակյալ կրթության մատչելիության ապահովման և առկա մարտահրավերները հաղթահարելու համար Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների կրթության միասնական քաղաքականության մշակումը կարևորագույն նախապայման է, որի շրջանակներում, նախ և առաջ ենթադրվում է բարեփոխումներ իրականացնող մարդկային ռեսուրսների ապահովում – ոչվրացալեզու դպրոցների ապագա ուսուցիչների համալսարանական պատրաստում, գործող ուսուցիչների մասնագիտական զարգացման քաղաքականության մշակում նրանց կարիքների և շահերի հաշվառումով, նրանց կողմից պետական լեզվի տիրապետման աջակցություն:

Էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում նախադպրոցական կրթության հնարավորությունների և մատչելիության ընդլայնումը պահանջում է **համապատասխան ենթակառուցվածքի** զարգացում, որակյալ նախադպրոցական կրթության համար համապատասխան պայմանների ստեղծում և ռեսուրսների մոբիլիզացում: Նախադպրոցական կրթությունը օժանդակում է դեռահասների կոգնիտային, սոցիալական և լեզվական ունակությունների և իրավասությունների զարգացմանը և մեծավ մասամբ սահմանում է դպրոցական պատրաստություն: Համապատասխանաբար, նախադպրոցական կրթության ապահովման նպատակով անհրաժեշտ է կոմպլեքսային միջոցառումների իրականացում, որպեսզի նախադպրոցական կրթության փուլերին սկսվի դաստիարակության առանձնահատկությունից դաստիարակչական-կրթական մոտեցումներին անցնելու համար համապատասխան աջակցության միջոցառումների անցկացում և բոլոր նախադպրոցական հաստատություններում դպրոցական պատրաստության ծրագրերի պարտադիր ռեժիմով արմատավորում:

Կծրագրվի երկլեզու կրթության նոր մոդելի ներդրման ընդլայնում էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների ոչվրացալեզու դպրոցներում, որոնք ընթանում են «Նոր դպրոց» մոդելի սկզբունքների հաշվառմամբ երրորդ սերնդի ազգային ուսումնական պլանի ներդրման շրջանակներում: Բիլինգային՝ երկլեզու կրթության յուրահատկությունից ելնելով, առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցման մեթոդաբանության հաշվառումով և գոյություն ունեցող մարտահրավերների հաղթահարման համար,

ուսուցիչները պետք է վերապատրաստվեն ինչպես վրաց լեզվից (լեզվի տիրապետման մակարդակի բարձրացում), այնպես էլ առարկայական ուղղություններով և վրաց լեզվից առարկայի ուսուցման ունակությունների զարգացման մեջ: Առավելագույն ջանքեր պետք է ուղղված լինեն բարձր որակի դասագրքեր, այդ թվում վրացերենի՝ որպես երկրորդ լեզվի, ինչպես նաև մայրենի լեզվի դասագրքեր ստեղծելու համար:

Ինտեգրման նպատակներին հասնելու համար կարևոր է, որ դպրոցական դասագրքերը **արտացոլեն Վրաստանում առկա բազմազանությունը** և պաշտպանված լինեն կարծրատիպային կամ խտրականության տերմինաբանությունից:²⁵ Միաժամանակ ապահովված պետք է լինի ուսուցիչների գիտակցության բարձրացումը նշված թեմաների շուրջ:

Ռազմավարությունը մեծ նշանակություն է շնորհում ինչպես **պետական լեզվի** բարձր մակարդակով ուսուցման ապահովմանը, այնպես էլ հոգում է **մայրենի լեզվով** ուսուցման մասին, որպեսզի ինչպես մեծաթիվ, այնպես էլ փոքրաթիվ ազգերի ներկայացուցիչներին տրվի հնարավորություն ավելի լավ տիրապետելու մայրենի լեզուն, ինչը նպաստում է այս լեզուների պահպանմանը և զարգացմանը: Նշվածը պահանջում է էթնիկ փոքրամասնությունների լեզուների ուսուցման չափորոշիչների զարգացում, դպրոցներում զբաղված մայրենի լեզուների մասնագետների որակավորման բարձրացում, նոր կադրերի պատրաստում, մանկավարժների գնահատման համակարգի արմատավորում և համապատասխան ուսումնական ռեսուրսների ստեղծում: Ուսում-ուսումնառության որակի բարելավման համար կարևոր է նախադպրոցական և դպրոցական մակարդակով մանկավարժների որակավորման բարձրացմանը աջակցության նպատակով լիարժեք գործարկվեն դաստիարակման կարճատև ծրագրերի և ուսուցիչների պատրաստության, գնահատման և խրախուսման մեխանիզմները: Կրթության ընթացիկ բարեփոխումների արդյունավետության համար ինտենսիվ ռեժիմում պետք է ուղղորդվի կրթական հաստատությունների ղեկավար անձանց և վարչական-տեխնիկական անձնակազմի մասնագիտական զարգացումը:

Լուծելի է կրթությունից դուրս մնացած էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ անձանց, այդ թվում սահմանափակ կարողություններով և սահմանափակ հնարավորություններ ունեցող (ՄՀՈԻ) անձանց, գնչուների համայնքի ներկայացուցիչների, ընտանիքի որոշմամբ վաղ ամուսնության կամ աշխատանքային գործունեությանը ընդգրկվելու պատճառով ուսումնառությունից կտրված անձանց կրթական տարածքում ինտեգրվելու խնդիրը:

Քաղաքացիական հավասարության և մշակութային բազմազանության ժողովրդականացումը և աջակցությունը պետք է տեղի ունենա առաջին հերթին ձևական և ոչձևական կրթության

²⁵ Third Opinion on Georgia, p. 17, <https://rm.coe.int/3rd-op-georgia-en/1680969b56>

տարածքում: Կարևոր է ինչպես հանդուրժողական և ինկլյուզիոն կրթական միջավայրի ապահովում մինչդպրոցական, դպրոցական, մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատություններում, այնպես էլ մշակութային բազմազանության հարցերի մտցնումը դասագրքերում, համապատասխան նախագծերի իրականացումը, այդ թվում հաստատությունների վարչարարության և մանկավարժների գիտակցության բարձրացման ուղղությամբ, տարբեր էթնիկ փոքրամասնությունների և մեծամասնության ներկայացուցիչների համատեղ մշակութային, կրթական, սպորտային ծրագրերի և ակտիվությունների կազմակերպում-իրականացումը:

Էթնիկ փոքրամասնությունների բարձրագույն կրթության մատչելիության բարելավման համար ձևափոխության և նոր մարտահրավերին հարմարվողականություն է պահանջում «Վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագիրը» (այսպես կոչված 1+4 կրթական ծրագիր):

Նպատակ 3. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար կրթության բարձր որակի և մատչելիության ապահովում կրթության բոլոր մակարդակներով

Խնդիր 3.1 Նախադպրոցական կրթության մատչելիության աճ և որակի ապահովում,

Խնդիր 3.2 Որակյալ միջնակարգ կրթության մատչելիության ապահովում,

Խնդիր 3.3 Աջակցություն էթնիկ փոքրամասնություններին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար,

Նպատակ 4. Հանդուրժողական և ինկլյուզիվ կրթական միջավայրի խրախուսում

Խնդիր 4.1 Կրթությունից դուրս մնացած էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ անձանց (ՍՀՈՒԱ՝ Սահմանափակ հնարավորություններով անձինք և գնչուներ) կրթական կարողությունների իրականացման աջակցություն,

Խնդիր 4.2 Քաղաքացիական իրավահավասարության աջակցության և մշակութային բազմազանության ժողովրդականացում ձևական և ոչձևական կրթությունում:

ՌԱԶՄՄՎԱՐԿԱՆ ԱՌԱՋԱՆԵՐԹՈՒԹՅՈՒՆ 3 - ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ, ՔԱՂԱՔԱՅԻՄԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական իրավահավասարության տեսանկյունից ձեռք բերված առաջընթացը ներկայացնում է սույն ռազմավարության առաջնահերթային ուղղության շարունակական աճ:

Իշխանության նպատակն է պահպանել էթնիկ փոքրամասնությունների ինքնատիպությունը, օժանդակել փոքրամասնությունների ներկայացուցիչների դիրքորոշման և հայացքների հրապարակային քաղաքական զարգացմանը, ապահովել **իրավահավասարության սկզբունքների արդյունավետ իրականացումը**, բազմազգ հասարակությունում ամրապնդել վստահությունը, համագործակցությունը, ներողամտությունը, տարբերվողի նկատմամբ հարգանքը և ընդունումը:

Վերը նշվածից ելնելով, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ռազմավարությունն ուղղված է մի կողմից, քաղաքական կյանքում էթնիկ փոքրամասնությունների ձևական, քանակական տեսանկյունից ավելացած ներկայացուցչության և մասնակցության, իսկ մյուս կողմից էթնիկ փոքրամասնությունների համայնքի և ամբողջությամբ հասարակության իրավական, մասնագիտական ուժեղացման վրա, ինչը հաջող քաղաքացիական ինտեգրման քաղաքականություն վարելու կարևոր նախապայմանն է:

Նշված նպատակի ապահովումը ներառում է հետևյալ ոլորտները. էթնիկ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ գիտակցականության բարձրացում, քաղաքական ընդգրկման մեծացում, քաղաքացիական մասնակցության բարելավում, մեդիայի և լրատվության մատչելիության աճ:

Սույն ռազմավարության քաղաքացիական ընդգրկման ուժեղացմանը կողմնորոշված խնդիրների նպատակն է հավասար և հանդուրժողական միջավայրի ստեղծան համասպատասխան միջոցառումների անցկացումը: Այստեղից ելնելով, կարևոր խնդիրներից մեկն է համարվում **հավասար ընտրական միջավայրի զարգացումը**, որը կօժանդակի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից մտածված և ազատ ընտրություն կատարելուն:

Վերոնշյալը տարածվում է երկրի յուրաքանչյուր քաղաքացու վրա, չնայած նրա էթնիկ կամ մշակութային տարբեր լինելուն, այդ թվում փոքրաթիվ և ցրված բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների վրա նույնպես: Քաղաքացիական ինտեգրման գործընթացում նաև նախատեսված է գենդերային հավասարության ապահովման սկզբունքների արմատավորումը էթնիկ փոքրամասնությունների համայնքներում:

Գենդերային հավասարության ապահովմանը աջակցության և հասարակությունում հանդուրժողական տրամադրությունների ուժեղացման ապահովման համար ռազմավարության նպատակն է մեր երկրի քաղաքացիների գիտակցության բարձրացումը, առանց ազգային պատկանելության խտրականության, որպեսզի բազմազգ հասարակության ներկայացուցիչները պատշաճորեն հասկանան իրենց իրավունքների բովանդակությունը և գոյություն ունեցող իրավական և ինստիտուցիոն շրջանակների սահմաններում կարողանան դրանք իրականացնել առավել բարօրության և արժանապատիվ կյանքի հասնելու համար:

Պետությունը աջակցություն կցուցաբերի այս ուղղությամբ տեղեկատվական բնույթի ակտիվությունների իրականացմանը, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան պաշտպանել սեփական իրավունքները, մինևույն ժամանակ իրենք նույնպես չխախտեն ուրիշի իրավունքները և չհամակերպվեն դրանց խախտմանը: Լավ ըմբռնեն սեփական դերը ժողովրդավարական հասարակությունում ոչ միայն սեփական իրավունքների իրականացման, այլև սեփական պարտականությունների կատարման տեսանկյունից նույնպես:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների **ընդգրկման բարելավման** նպատակով կարևոր է արմատավորվեն և գործարկվեն տարբեր նոր և լրացուցիչ, արդյունքին կողմնորոշված մեխանիզմներ, մինևույն ժամանակ բարելավվի գոյություն ունեցողը: Նույնպես կտրուկ կարևոր է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով խիտ բնակվող տարածաշրջանների ինքնակառավարման մարմիններում զբաղված հանրային գործիչների մասնագիտական ամրապնդումը, նրանց գործունեության համար անհրաժեշտ անալիտիկ և կոնկրետ մասնագիտական ունակությունների մշտական զարգացումը և կատարելագործումը:

Ռազմավարության շրջանակներում պլանավորված է, որ էլ ավելի ուժեղանա և առավել համակարգված դառնա պետական գերատեսչությունների գործունեությունը: Այս նպատակով պետք է **ուժեղանան կառավարական հանձնաժողովը և միջգերատեսչական աշխատանքային խմբերը** և խորանա համագործակցությունը Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ: Կառավարական հանձնաժողովի շրջանակներում գործունեությունը առավել ինտենսիվությամբ կշարունակեն թեմատիկ աշխատանքային խմբերը, ինչը տալիս է այն բանի հնարավորություն, որ տարբեր հարցերի քննարկման մեջ ընդգրկվեն ոչկառավարական կազմակերպություններ, փորձագետներ և այլ շահագրգռված անձինք: Աշխատանքային ձևաչափը էլ ավելի ներկայացուցչական կդառնա՝ նրա գործունեությունում ներկայացված կլինեն Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջանների պետական լիազորների, հանրային հեռարձակման և Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները:

Տեղական մակարդակով որոշումներ ընդունելու գործընթացում, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը բարձրացնելու նպատակով կանոնավոր բնույթ կհաղորդվի Քվեմո Քարթլիի և Կախեթիի երկրամասերում պետական լիազոր-նահանգապետի վարչություններում հասարակական-խորհրդատվական խորհուրդների գործունեությանը: Կարևոր է համանման խորհրդատվական խորհուրդներ ձևավորվեն նաև Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում, ինչպես նաև էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջանների մունիցիպալային մակարդակով, որպեսզի ապահովված լինի ավելի լայն մասնակցություն և ինտենսիվ հաղորդակցություն՝ արդյունքների հասնելու համար:

Գենդերային հավասարություն, գենդերային նշանով խտրականության դեմ պայքարը, հասարակական հայացքների ձևավորումը, կանանց մասնակցության աճը որոշումների ընդունման և քաղաքական կամ սոցիալ-տնտեսական ոլորտում՝ կլինի կարևոր միջանցիկ գերակայություն քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական քաղաքականության շրջանակներում: Կանանց իրավունքների և կարողությունների մասին գիտակցականության բարձրացումը և նորարարական ակտիվություններին աջակցությունը, էականորեն բարձրացնում է նրանց դերը հասարակական կյանքում, ինչպես նաև օժանդակում է **երիտասարդների քաղաքական մասնակցության և համապատասխան աջակցող մեխանիզմների զարգացմանը:**

Քաղաքական-տնտեսական գործընթացներում երիտասարդների ընդգրկման ամրապնդմանը, պետական մտածողության ձևավորմանը և նրանց հասարակական գործունեությունում ակտիվացմանը աջակցության նպատակով, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում կբացվեն **երիտասարդական ընդգրկման կենտրոններ**, որոնք երիտասարդներին կառաջարկեն գիտակցության բարձրացմանը կողմնորոշված, մշակութային, սպորտային ծրագրեր, նրանց համար հետաքրքիր ակտիվություններ, խորհրդատվական սպասարկումներ, միաժամանակ կստեղծվեն համակարգիչով և համացանցով, սոցիալական ցանցերով և էլեկտրոնային գրադարաններից օգտվելու և հեռավար կրթություն ստանալու հնարավորություններ: Նույնպես կստեղծի տարբեր ազգի ներկայացուցիչ երիտասարդների համար հրատապ հարցերի մասին համատեղ ծրագրեր իրականացնելու հեռանկար (դոնորների աջակցությամբ), ինչը կօժանդակի միջմշակութային երկխոսության և իրատեսական ու կայուն ինտեգրման գործընթացների ուղղորդմանը:

Էական դեր է շնորհվում փոքրամասնությունների հարցերի մասին պետության և քաղաքացիական հասարակության կողմից համակարգված և **պրոակտիվ ռազմավարական** հաղորդակցություններ վարելուն, ինչը առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում վերջին տարիներին աճող ապալրատվության ֆոնի վրա, քանզի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները ներկայացնում են են ապալրատվության և տեղեկատվական ձեռնածությունների՝ մանիպուլյացիաների թիրախային սեզմենտերից մեկը: Համապատասխանաբար, կարևոր է կանխարգելման նպատակային միջոցառումների անցկացումը: Այս ուղղությամբ անփոփոխ է **մեդիայի** դերը ինչպես էթնիկ փոքրամասնությունների թեմայի լուսաբանման և նրանց ընդգրկման ապահովման, այնպես էլ քաղաքացիական և քաղաքական կյանքում ներկայացնելու, էթնիկ խմբերի իրավահավասարությունը և ինքնատիպությունը ժողովրդականացնելու տեսանկյունից: Ավանդական և թվային մեդիան մեծ դեր է կատարում հասարակությունում տեսակետների և կարծիքների ձևավորման, սուտ կարծրատիպերի և ճիշտ տեղեկատվության նույնականացման և հանդուրժողական տրամադրությունների արմատավորման գործում:

Միննույն ժամանակ հավասարության և ինքնատիպության օժանդակության տեսանկյունից, մեղիան էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին տալիս է հազվագյուտ հնարավորություն մեղիա տարածքում տեսնել իրենց կենցաղն արտացոլող սյուժեներ, քննարկեն գոյություն ունեցող մարտահրավերները, ներկայացնեն սեփական հայացքները հիմնախնդիրների լուծման ճանապարհների կապակցությամբ և ստանան տեղեկատվություն իրենց համար հետաքրքիր հարցերի մասին: Համապատասխանաբար, պետական մեղիայի անկախության ապահովմանը զուգահեռաբար, կատարվեն քայլեր էթնիկ փոքրամասնությունների ինքնատիպության և բազմազանության հետ կապված մեղիայի զգայունության բարձրացման տեսանկյունից:

Այս համատեքստում պետությունը կհամագործակցի մեղիակազմակերպությունների հետ, որպեսզի նրանք միասնաբար նպաստեն **հավասարության և հանդուրժողականության սկզբունքների ժողովրդականացմանը**: Միննույն ժամանակ էթնիկ փոքրամասնությունների քաղաքական սոցիալականցման և ընդհանուր առմամբ քաղաքացիական ինտեգրման գործընթացում նշանակալից է նրանց համար մայրենի/հասկանալի լեզուներով տեղեկատվության մատչելիության բարելավման և միասնական տեղեկատվական տարածքում ընդգրկումը: Մեղիայի և տեղեկատվության մատչելիության ուղղությամբ առաջատար գործառույթը ստանձնել է Հանրային հեռարձակումը, որը պետք է աջակցի ընթացիկ սոցիալական, տնտեսական և քաղաքական գործընթացների մասին էթնիկ փոքրամասնությունների իրազեկվածության, ինչպես նաև ընդհանուր ազգային, ժողովրդավարական արժեքների տարածման-հաստատման, հասարակության իրազեկվածության աճը էթնիկ փոքրամասնությունների հետ կապված հարցերի մասին, էթնիկ փոքրամասնությունների թեմատիկայի լուսաբանման բարձր մասնագիտական չափորոշիչների ներդրմանը:

Նույնպես կարևոր է պատրաստվեն այնպիսի հաղորդումներ, որոնք կցուցադրեն Վրաստանի էթնիկ բազմազանության, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ավանդույթները և մշակույթը: Անհրաժեշտ է նպաստեն տարածաշրջանային մեղիաների զարգացմանը էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ մունիցիպալիտետներում, պլանավորվի և իրականացվի լրագրողների և մեղիա-ինստիտուտների ներկայացուցիչների մասնագիտական զարգացում, ինչպես նաև անցկացվեն գիտակցության բարձրացման ընթացակարգեր մշակութային բազմազանության հարցերում:

Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ բնակչության տեղեկատվական ապահովում և էթնիկ փոքրամասնությունների լեզուներով մեղիակոնտենտի՝ մեղիաբովանդակության մատչելիության բարելավումը կապվում է փոքրամասնությունների լեզուներով հաղորդման ծրագրերի էլեկտրոնային և տպագիր մեղիայի տարածման ընդարձակմանը և մատչելիության աճին: Որպես անհետաձգելի կարիք է ծառայում տեղեկատվական ակտիվությունների բարելավմանը, ազգային ակիբների ազդանշանի

տարածման տարածքի ընդարձակմանը, տարածաշրջանային հեռուստատեսությունների կողմից տեղական բնակչությանը հասկանալի լեզվով սեփական արտադրանքի ստեղծման գարգացմանը, Վրաստանի հայալեզու և ադրբեջանալեզու լրագրողների վրացի գործընկերների հետ միասնական մեդիանախագծերին աջակցությունն այս տեսակետից:

Տեղեկատվական ապահովման ուժեղացման տեսանկյունից պլանավորված են տեղեկատվական հաղորդումներ և ծրագրեր էթնիկ փոքրամասնությունների լեզուներով. մայրենի լեզվով կայք-հարթակների և տեղեկատվության թարգմանություն, ոչվրացալեզու մեդիայի աջակցություն և նախագծեր, վարժանքներ մեդիաաշխատակիցների մասնագիտական ամրապնդման համար, դոնեդոու ընթացակարգերը մարդու իրավունքների, պետական սպասարկումների, ինչպես նաև Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման դրական բարիքների և ընթացիկ գործընթացների մասին:

Կշարունակվի ոչվրացալեզու «Վրաստան» և «Գյուրջիստան» թերթերի հրատարակությունը, դրանց տարածման տարածքի ընդարձակումը:

Քաղաքականության արդյունավետության համար կարևոր է, որ բարձրանա գիտակցականությունը քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման հիմնական սկզբունքների մասին ինչպես մեծամասնությունում, այնպես էլ փոքրամասնությունում, որպեսզի հստակորեն տեսնեն ինտեգրման անհրաժեշտությունը, դրա դրական արդյունքները երկրի և ամեն մի քաղաքացու համար և գիտակցեն նշվածի պետական և հասարակական նշանակությունը: Այս նպատակով ռազմավարության շրջանակներում երկրի մասշտաբով կանխագծված են նպատակներ, մեծամասնության և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար համապատասխան տեղեկատվության մատակարարման և գիտակցության բարձրացման տեսանկյունից: Միջոցառումներին ընդգրկված կլինեն բոլոր համարժեք ոլորտները և ուղղությունները՝ կրթություն, մշակույթ, մեդիա և այլն:

Հավասար և հանդուրժողական միջավայրի հաստատման տեսանկյունից առանձնապես կարևոր է երկրում գործող **հակախտրականության օրենսդրության արդյունավետ կիրառման և հակախտրականության մեխանիզմների արդյունավետ գործունեությունը:** Վերջին ժամանակաշրջանում իրականացված հետազոտությունները և մոնիթորինգի հաշվետվությունները ակնհայտ դարձրին այն, որ այս տեսանկյունից կարևոր մարտահրավեր է ներկայացնում հասարակությունում հակախտրականության օրենսդրության և համապատասխան մեխանիզմների մասին ոչպատշաճ տեղեկատվության տիրապետումը: Նշված հետազոտությունների համաձայն, Վրաստանի բնակչության յուրաքանչյուր հինգերորդ անձն ունի տեղեկատվություն 2014 թվականին պետության կողմից ընդունված «Խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» օրենքի և համապատասխան գործադրման մեխանիզմների մասին:

Անհրաժեշտ է նաև հակախտրականության մեխանիզմների արդյունավետության բարձրացում և աջակցություն, էթնիկ փոքրամասնությունների հարցերով դատավորների, դատախազների և իրավապահ համակարգի ներկայացուցիչների, ինչպես նաև փաստաբանների զգացմունքայնության բարձրացում, չափորոշիչների կատարելություն և միջազգային մոտեցումների համատեղելիություն:

Այն բանի նկատառումով, որ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները առանձին դեպքերում կարող են զրկված լինել հնարավորությունից սեփական իրավունքների պաշտպանության համար կիրառել հակախտրականության մեխանիզմները, պետությունը նրանց ապահովում է որակյալ և ժամանակին **իրավաբանական օգնությամբ**: Իրավաբանական օգնության ծառայության բյուրոների և խորհրդատվական կենտրոնների միջոցով, որոնք ներառում են Վրաստանի ամբողջ տարածությունը, էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներին կցուցաբերվի իրավական և իրավաբանական օգնություն նրանց հասկանալի լեզվով: Այս նպատակով անհրաժեշտությանը համապատասխան կիրականացվի իրավաբանական օգնության ծառայության ապահովում լրացուցիչ երկլեզու որակյալ կադրերով: Ձուգահեռ ռեժիմում կանցկացվեն բնակչության տեղեկացվածության բարձրացման մասին ընթացակարգեր/ակտիվություններ նշված կազմակերպությունների հնարավորությունների և սպասարկումների մասին:

Վերոնշյալին հասնելու համար կանխագծված են հետևյալ նպատակները.

Նպատակ 5: Քաղաքացիական, քաղաքական և հանրային կառավարման բոլոր մակարդակով մասնակցության բարելավում

Խնդիր 5.1 Կառավարման և ինքնակառավարման իրականացման գործընթացներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկման աջակցություն,

Խնդիր 5.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ակտիվ և պասսիվ ընտրական իրավունքի արդյունավետ իրացման մեխանիզմների զարգացում:

Նպատակ 6: Մեդիայի և տեղեկատվության մատչելիության բարելավում

Խնդիր 6.1 Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով մեդիա արտադրանքների որակի բարելավում,

Խնդիր 6.2 Մեդիա գրագիտության զարգացման աջակցություն:

Նպատակ 7: Հավասարության և իրավահավասարության միջավայրի հաստատում

Խնդիր 7.1 Քաղաքացիական գիտակցության բարձրացում մարդու իրավունքների, քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականության և հակախտրականության ու գենդերային հավասարության հարցերում,

Խնդիր 7.2 Արդարադատության համակարգի և իրավապահ մարմինների մեխանիզմների մատչելիության բարձրացում, որակյալ իրավաբանական օգնության ապահովում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ 4 – ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Երկրի **սոցիալ-տնտեսական կյանքում** էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների արդյունավետ մասնակցությունը քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման քաղաքականության հաջողությամբ իրականացման կարևորագույն նախապայմաններից մեկն է: Քաղաքացիական ինտեգրման ոլորտում դեռևս գոյություն ունեցող մարտահրավերների պատճառով, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները հաճախ ոչլրիվ տեղեկատվության են ստանում երկրում այս ուղղությամբ գոյություն ունեցող հնարավորությունների մասին: Այդ պատճառով, առանձնահատուկ ջանքեր կհատկացվեց էթնիկ փոքրամասնությունների կարիքների շարունակական հետազոտությանն ունյականացմանը, որպեսզի ժամանակին և արդյունավետորեն տեղի ունենա դրանց արձագանքը և այնպիսի ծրագրերի և սպասարկումների զարգացումը, որոնք կախված են առողջապահության, սոցիալական պաշտպանության, զբաղվածության, մասնագիտական վերապատրաստման, ձեռներեցային գործունեության ընդգրկումը և ինքնազբաղվածության արդյունավետության բարձրացումը: Այս տեսակետից ուշադրությունը կկենտրոնացվի սոցիալ-տնտեսական արտոնությունների, կարողությունների, համապատասխան ծրագրերի և պետական սպասարկումների մասին իրազեկվածության բարձրացման, դրանց մատչելիության բարելավմանը աջակցող խորհրդատվական և կրթական ակտիվությունների, ինչպես նաև մասնագիտական պատրաստման-վերապատրաստման և զբաղվածության հնարավորությունների աճի, տեղական բիզնեսի զարգացման մատչելիության և աշխատատեղերի ստեղծման վրա:

Ուժեղացված ինկլյուզիվ տնտեսական քաղաքականություն, ինչը ենթադրում է բնակչության համապարփակ ընդգրկում տնտեսական զարգացման գործընթացում և նպատակաուղղված է հասարակության յուրաքանչյուր անդամի բարօրության, նրանց սոցիալական իրավահավասարության և բնակչության կյանքի պայմանների բարելավմանը:

Վրաստանի կառավարությունը, վերլուծելով 2020 թվականի ընթացքում COVID-19-ի համաճարակի տարբեր ոլորտներում առաջացրած մարտահրավերները, միջին և երկարաժամկետ քաղաքականություն պլանավորելիս, այլ հարցերի հետ մեկտեղ մեծ ուշադրություն է հատկացնում էթնիկ փոքրամասնությունների կարիքներին: Առավելագույն ջանքեր ուղղված կլինեն էթնիկ փոքրամասնությունների համար պետական լեզվով և փոքրամասնությունների մայրենի լեզուներով տեղեկատվության մատակարարման և սոցիալ-

տնտեսական իրավունքների ապահովման աջակցության ուղղությամբ, կիրականացվեն տեղեկատվական հանդիպումներ և դոնեդուո գործողություններ վարակի տարածման կանխարգելման նպատակով, կշարունակվի նոր կարիքներին հարմարեցված տեղեկատվական նյութերի այլընտրական ճանապարհներով տարածումը, սոցիալ-տնտեսական օգնության նպատակով տարբեր կարիքավոր սոցիալական խմբերի համար սննդամթերքով և հիգիենիկ արտադրանքներով ապահովումը:

Ռազմավարությունը հենվում է Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման մասին պայմանագրի վրա, որի կարևոր ուղղություններից մեկը՝ «Զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ»-ը, նախատեսում է տարբեր խմբերի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների համայնքների համար ինկլյուզիվ աշխատանքային շուկայի, **սոցիալական անվտանգության համակարգի**, սոցիալական պահպանության, սոցիալական ընդգրկվածության և հակախտրականության քաղաքականության անցկացում: Ռազմավարությամբ որոշված նպատակների շրջանակներում կանխագծված են խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է այնպիսի սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացում, որոնք մեծացնում են էթնիկ փոքրամասնությունների հաղորդակցությունը վրացալեզու բնակչության և պետական ինստիտուտների հետ, նույնպես կբարելավի պետության կողմից առաջարկված սպասարկումներին հասանելիությունը, կստեղծի էկոլոգիական անվտանգության և էկոհամակարգի վնասման ռիսկերից խուսափելու հնարավորություն: Պետական գերատեսչությունները սեփական սեկտորային ռազմավարությունների մշակման և **սոցիալ-տնտեսական ծրագրեր**, թե սպասարկումներ իրականացնելիս նախատեսում են էթնիկ փոքրամասնությունների կարիքները և բնակչության տարածաշրջանների յուրահատկությունը: Կուժեղանա սոցիալական պահպանության գերակտիվ մոտեցումների արմատավորումը, այդ թվում **կանանց և երիտասարդների տնտեսական հզորացման աջակցությունը**, նրանց հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ընդգրկման ակտիվացումը:

Էթնիկ փոքրամասնությունների **մասնագիտական կրթության** կատարյալ և հավասար մատչելիության աճ մասնագիտական կրթական հաստատությունների ցանցի ընդլայնման միջոցով, մասնագիտական ուսումնարաններում վրաց լեզվի ուսուցում, աշխատանքային շուկային կողմնորոշված մասնագիտական կրթական ծրագրերի առաջարկ, ուսումնարաններին կից ուսանողական հանրակացարանների սարքավորում, չափահաս բնակչության ներկայացուցիչների համար մասնագիտական վերապատրաստման դասընթացների առաջարկ և շուկայում պահանջվող ունակություններով սարքավորումը նշանակալիորեն կմեծացնի զբաղվածության հնարավորությունները և կկրճատի տարածաշրջաններից դեպի կենտրոն և հարևան երկրներ աշխատանքային արտահոսքը:

Ռազմավարությունը նախատեսում է էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ մունիցիպալիտետներում **ենթակառուցվածքի զարգացման** (ճանապարհների,

ջրամատակարարման համակարգերի կարգավորում, գազիֆիկացիա) և պատշաճ հաղորդակցական հնարավորությունների ապահովում (համացանցավորում): Տեղական կարիքների հաշվառմամբ, պետությունը նշանակալից ներդրումներ կիրականացնի համապատասխան ենթակառուցվածքի ստեղծման և եղածի վերականգնման տեսանկյունից: Ենթակառուցվածքի և հաղորդակցության ստեղծում/վերականգնումը կօժանդակի էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ մունիցիպալիտետներում տարբեր տեսակի զբոսաշրջության զարգացմանը:

Էթնիկ փոքրամասնությունների կարիքների լիարժեք նույնականացման և ռազմավարությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ է ինչպես մեծաթիվ ազգերի, այնպես էլ փոքրաթիվ ազգերի մասին **վիճակագրական տվյալների հավաքագրում**, վերլուծության և մատչելիության բարելավում և համապատասխան տեղեկատվության հավաքում: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ինքնանույնականացման, կոնկրետ էթնիկ խմբերին իրենց պատկանելության հնարավորությունն ապահովելու համար պետությունը նախատեսում է Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդականների կոմիտեի հանձնարարականը, որի համաձայն համընդհանուր մարդահամարի ձևերը պետք է ընձեռեն ինքնանույնականացման բազմակողմանի և արդյունավետ հնարավորություն: Այս նպատակով համընդհանուր մարդահամարի գործընթացում կկատարվեն կոնկրետ քայլեր տարբեր ազգերի ներկայացուցիչների կողմից ինքնանույնականացման և կոնկրետ էթնիկ խմբերին՝ իրենց պատկանելության հնարավորության ապահովման համար:

Անձնական տվյալների պաշտպանության հիման վրա հավաքագրված քանակական, թե որակական տվյալները պարզորեն դրսևորում են էթնիկ փոքրամասնությունների կապակցությամբ պետության կողմից իրականացված քաղաքականության հաջողական կողմերը և մարտահրավերները, որոնք օժանդակում են գոյություն ունեցող հիմնախնդիրների ժամանակին բացահայտման և համապատասխան միջոցառումների պլանավորման/ստուգման/իրականացումը: Նույնպես իրականացված միջոցառումների արդյունավետության գնահատում և գործնական պլանով պլանավորված ակտիվությունների/միջոցառումների փոփոխում: Համապատասխանաբար, պետությունը պատշաճ ուշադրություն կհատկացնի էթնիկ փոքրամասնությունների հետ կապված հասարակական կյանքի տարբեր ոլորտներում համապատասխան **քանակական և որակական տվյալների** հավաքագրմանը, դրանց վերլուծության արդյունքում նույնականացված կարիքների և ապացույցներին հիմնված մոտեցումների մշակումը/իրականացումը/գնահատումը:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ **երիտասարդների հզորացման** և ինտեգրման գործընթացին նրանց ռեսուրսի արդյունավետ կիրառման համար պետության կողմից

կանխագծված է նպատակ, որը օժանդակելու է երկրում երիտասարդների կրթության մակարդակի բարձրացմանը, դրանում պետական մտածողության, ակտիվ քաղաքացիության, լիդերության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Միաժամանակ առանձնահատուկ շեշտադրություն կկատարվի **կանանց ուժեղացման նպատակով** պետական սոցիալական ծրագրերի և սպասարկումների մասին տեղեկատվության էլ ավելի պրոակտիվ մատակարարմանը, տարբեր ծրագրերում նրանց մասնակցության խրախուսման նպատակով: Նշված համատեքստում մեծ նշանակություն է ձեռք բերում նրանց ավելի շատ սոցիալական գործառույթի շնորհումը, որպեսզի բարձրանա մրցունակության մակարդակը զբաղվածության շուկայում, քաղաքական և քաղաքացիական գործընթացներում կարողանան սեփական կարողությունը իրացնել և բարօրության հասնել:

Ռազմավարության շրջանակներում կանանց տնտեսական հզորացման աջակցությունը ներառում է կանանց տնտեսական իրավունքների պաշտպանություն, այդ թվում հողի, գույքի, ակտիվների և այլ ռեսուրսների հավասար մատչելիություն, ինչպես նաև ձեռներեցային ունակությունների զարգացում: Կիրականացվեն միջոցառումներ, որոնք կանանց հնարավորություն կտան ակտիվորեն մասնակցել սեփական տնտեսական իրավունքների պաշտպանությանը, դրանով ավանդ կներդնեն ժողովրդավարության զարգացման մեջ: Կանանց տնտեսական հզորացումը նշանակալի հազեցվածություն է ձեռք բերում նաև գենդերային հավասարության հասնելու գործընթացում:

Դրա հետ միասին ուշադրություն կհատկացվի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հանրային ծառայություններում զբաղվածության մատչելիության բարելավմանը:

Հանրային ծառայությունում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների ընդգրկման, գործարար ունակությունների զարգացման և որակավորման բարձրացման նպատակով կզարգանան, այսպեսդ կոչված «1+4 ստաժավորման ծրագրի» հնարավորությունները:

Նպատակ 8: Սոցիալ-տնտեսական պայմանների և հնարավորությունների բարելավում

Խնդիր 8.1 Պետական սոցիալ-տնտեսական ծրագրերում էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման բարձրացում,

Խնդիր 8.2 Էթնիկ փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում ենթակառուցվածքի զարգացում,

Խնդիր 8.3. Կանանց և երիտասարդների սոցիալ-տնտեսական հզորացման աջակցություն,

Խնդիր 8.4 Էթնիկ փոքրամասնությունների, այդ թվում փոքրաթիվ ազգերի անձնական տվյալների պահպանման և ինքնանույնականացման հիման վրա վիճակագրական տվյալների հավաքագրում, վերլուծության և մատչելիության բարելավում:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԱՆՐԱԹՈՒԹՅՈՒՆ 5 – ՄԻՋՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԿՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Սույն ռազմավարությունը սոցիալ-տնտեսական ինտեգրումը դիտարկում է որպես ընդհանուր ազգային արժեքների և սկզբունքների ստեղծման գործուն մեխանիզմ, ինչը նշանակալից դրական ազդեցություն կգործի երկրում ինչպես ժողովրդավարական, այնպես էլ ինտեգրման գործընթացների ընթացքի վրա:

Քաղաքացիական ինտեգրման գործընթացների արդյունավետ ուղղորդումն ապահովելու կարևոր նախապայման է ներկայացնում մշակութային արժեքների և նույնականության պահպանումը, առանց ազգային պատկանելության խտրականության, մշակութային բազմազանության ժողովրդականացումը և հարգանքը: Բազմազանության և բազմակարծիքության (պլյուրալիզմի) վրա հիմնված հասարակության զարգացման օժանդակությունը մեծավ մասամբ սահմանում է ժողովրդավարության որակը և հզորացումը: Բազմամշակութային և հանդուրժողական միջավայրի հաստատման որակը պայմանավորում է միջմշակութային երկխոսության արդյունավետությունը, որը կապվում է էթնիկ փոքրամասնությունների մշակութային ինքնատիպության բաղկացուցիչ մասի՝ լեզվի, մշակույթի և կրոնական ավանդույթների, մշակութային ժառանգության ներկայացման և ժողովրդականացման, ինչպես նաև տարբեր ազգային մշակույթների միջև հաղորդակցության հետ: Մշակութային բազմազանության և ինքնատիպության պատշաճ պահպանության և օժանդակության տեսանկյունից անհրաժեշտ է էթնիկ խմբերի ընթացիկ կարիքների հետազոտության արդյունքների և վերլուծության վրա հիմնված քաղաքականության իրականացման խնդիրների կատարելություն:

Պատանեկության տարիքից տեղեկատվության մատակարարումը և գիտակցականության բարձրացումը ինչպես էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների, այնպես էլ էթնիկ փոքրամասնությունների ինքնատիպության հետ կապված հարցերի մասին. էթնիկ խմբերի լեզվի, մշակույթի, կրոնի, ավանդությունների մասին, կնպաստեն հասարակությունում ներողամտության, տարբերն ու տարբերվողներին ընդունման զարգացմանը, ինչը վերջին հաշվով ներկայացնում է երկրում բնակվող տարբեր ազգերի ներդաշնակ համակեցության նախապայման: Նշված գործընթացը ենթադրում է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին մեծամասնության և այլ ազգությունների մշակույթի և ավանդույթների մասին նաև տեղեկատվության մատակարարում: Այս նպատակով ռազմավարության շրջանակներում սահմանված է մշակութային ինքնատիպության և ավանդույթների հետ

կապվածության գիտակցության բարձրացմանը կողմնորոշված բազմազան միջոցառումների իրականացում, այդ թվում համատեղ մշակութային-սոցիալական ակտիվություններ տարբեր էթնիկ խմբերի մասնակցությամբ:

Միջմշակութային երկխոսության զարգացումը բազմազգ հասարակությունում կիրախուսի վստահությունը, համագործակցությունը, ներողամտությունը, տարբերվողների նկատմամբ հարգանքը և ընդունումը: Հասարակությունում հանդուրժողական տրամադրությունների ուժեղացման նպատակով կոմպլեքսային քաղաքականության անցկացումը ներառում է Վրաստանի մշակութային բազմազանության մասին գիտակցության բարձրացում, տարբեր մշակութային, ճանաչողական, կրթական, զվարճալի, սպորտային միջոցառումների իրականացում, էթնիկ փոքրամասնությունների նյութական և ոչնյութական մշակութային արժեքների պահպանման և զարգացման աջակցություն: Ռազմավարությունը նախատեսում է միջմշակութային կրթական գործունեության խրախուսում, ինչը ենթադրում է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից ինչպես վրացական մշակույթին ավելի լավ ծանոթացում, այնպես էլ տարբեր ազգությունների մշակույթին վրաց հասարակության ներկայացուցիչներին, հատկապես երիտասարդներին ծանոթացում, ինչպես նաև միասնական մշակութային-կրթական և ազգությանը բնութագրական ավանդական սպորտային ակտիվությունների իրականացում:

Միջմշակութային երկխոսության շրջանակներում խնդիրներն այնպես են սահմանվում, որ բազմակողմանի մոտեցումներով աջակցեն տարբեր էթնիկ խմբերի միջև լավատեսական հաղորդակցության զարգացմանը և դեռևս գոյություն ունեցող պատնեշների հաղթահարմանը: Էթնիկ մշակույթների փոխանակումը և համադրումը կստեղծի տարբեր մշակույթները կապող կամուրջ: Պետությունը ջանքերը կուղղի միջմշակութային երկխոսության և բազմազգ համագործակցության ուժեղացման վրա: Էթնիկ փոքրամասնությունների մշակութային ավանդույթների աջակցությունը չի սահմանափակվի միայն նրանց պահպանությամբ, այլև խթան կհանդիսանա դրա զարգացման և ժամանակակից մշակութային ձեռքբերումների մերձեցման համար: Համատեղ սպորտային և մշակութային ակտիվությունների կանոնավոր կերպով իրականացումը կօգնի տարբեր էթնիկ խմբերի միմյանց հետ և մեծամասնության ներկայացուցիչների հետ մերձեցմանը, արժեքների, գիտության, փորձի փոխանակմանը, տարբեր ազգություններին բնութագրական օրենք-սովորություններին ծանոթությանը, ինքնադրսևորման և հանդուրժողականության ուժեղացմանը, ինչին արդյունքում հետևում է միջմշակութային հաղորդակցության և ինտեգրման ուժեղացում և ներդաշնակ համակցություն:

Մշակութային ժառանգության պահպանության և ժողովրդականացման նպատակով, ինտենսիվ ռեժիմում կշարունակվի էթնիկ փոքրամասնությունների նյութական և ոչնյութական մշակութային ժառանգության հաշվարկի և գույքագրման գործընթացը, մշակութային ժառանգության անշարժ հուշարձանների վերանորոգում-պահաճոյացումը, ինչպես նաև

թատրոնների, թանգարանների, գրադարանների գործունեության և տարբեր մշակութային միջոցառումներին աջակցությունը:

Էթնիկ խմբերի միջև երկխոսության և համերաշխության հաստատման նպատակով, աջակցություն կցուցաբերվի ընդհանուր **մշակութային և սպորտային տարածքների սարքավորմանը, համապատասխան ենթակառուցվածքի զարգացմանը:**

Մշակութային ինքնատիպության պահպանության և զարգացման խնդիրը նույնպես ներառում է այնպիսի ակտիվություններ, ինչպիսիք են. գրականության, ազգագրության, երաժշտության ժողովրդականացումը և հայկական, ադրբեջանական և ռուսական թատրոնների և թանգարանների, մշակութային միջոցառումների, այդ թվում ցուցահանդեսների/հրապարակումների ֆինանսավորումը: Նշված նպատակի կատարման համար էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծաբնակ տարածաշրջաններում կարևոր է սպորտային և մշակութային ենթակառուցվածքի զարգացումը, գրադարանների, ակումբների, մարզական տարածքների և մշակույթի տների/կենտրոնների գործունեության և զարգացման աջակցությունը, բազմամշակութային և միջմշակութային ակտիվությունների, արվեստի և սպորտային միջոցառումների կազմակերպումը, ազգային բանահյուսության, ավանդույթների և օրենք-սովորությունների ժողովրդականացումը:

Նպատակ 9: Մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության աջակցություն

Խնդիր 9.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակութային ժառանգության պահպանության նպաստում և ժողովրդականացում,

Խնդիր 9.2 Մշակութային բազմազանության մասին գիտակցության բարձրացում և միջմշակութային երկխոսության նպաստում,

Խնդիր 9.3 Զանգվածային միջմշակութային սպորտի և բազմամշակույթի աջակցություն և համապատասխան տարածքների/ենթակառուցվածքի զարգացում:

VI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՄՈՒԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1. Ռազմավարության և գործնական պլանի իրականացում

2021-2030 թվականների քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության արդյունավետ իրականացման նպատակով ստեղծվել է կառավարական հանձնաժողով, որի նպատակն է ապահովել պետական գերատեսչությունների

գործունեության իրականացումը քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ուղղությամբ: Կառավարական հանձնաժողովը կանոնավորապես հավաքվում է տարեկան երկու անգամ: Միաժամանակ, անհրաժեշտությունից ելնելով նախատեսված են աշխատանքային նիստերի, հանդիպումների և խորհրդատվությունների անցկացում: Հարցերի հրատապությունից ելնելով կառավարական հանձնաժողովը կհրավիրի թեմատիկ աշխատանքային խմբերի հանդիպումներ, որոնց կմասնակցեն ինչպես պետական գերատեսչությունների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և համայնքի կյանքով շահագրգռված անձինք:

Կառավարական հանձնաժողովի կազմում ընդգրկված են. Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարը (հանձնաժողովի նախագահ) և Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալ), Վրաստանի վարչապետի մարդու իրավունքների պաշտպանության և գենդերային հավասարության հարցերով խորհրդականը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի բռնազավթված տարածքներից տարահանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի կրթության և գիտության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի արդարադատության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի ներքին գործերի նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի բնապահպանության և գյուղատնտեսության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), Վրաստանի պաշտպանության նախարարի տեղակալը (հանձնաժողովի անդամ), պետական լիազորը, որի գործունեության տարածքը ներառում է Ադիգգենի, Ասպինձայի, Ախալցխիսեի, Ախալքալաքի, Բորժոմիի և Նինոծմինդայի մունիցիպալային սահմանները (հանձնաժողովի անդամ), պետական լիազորը, որի գործունեության տարածքը ներառում է Բոլնիսի, Գարդաբանի, Դմանիսի, Թեթրիձղարոյի, Մառնեուլի, Օալկայի մունիցիպալիտետների և ք.Ռուսթավի մունիցիպալիտետի վարչական սահմանները (հանձնաժողովի անդամ), պետական լիազորը, որի գործունեության տարածքը ներառում է Ախմետայի, Գուրջաանի, Դեդոփլիսձղարոյի, Թելավի, Լազոդեխի, Սագարեջոյի, Սիդնախի և Ղվարելի մունիցիպալիտետների վարչական սահմանները (հանձնաժողովի անդամ):

Քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և գործնական պլանի իրականացման համակարգման նպատակից ելնելով, կառավարական

հանձնաժողովն ունի հետևյալ իրավասությունները. ա) պետական գերատեսչություններից և կազմակերպություններից պահանջել և ընդունել հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, բ) հանձնաժողովի նիստին (այդ թվում ձայնի իրավունքով) հրավիրել պետական գերատեսչությունների և առանձին կազմակերպությունների ներկայացուցիչներ, գ) հանձնաժողովի իրավասության մեջ մտնող հարցերի ուսումնասիրման և պատշաճ հանձնարարականների մշակման նպատակով ստեղծել աշխատանքային խմբեր և հաղորդակցական-թեմատիկ խմբեր համապատասխան պետական գերատեսչությունների, կազմակերպությունների և անկախ փորձագետների մասնակցությամբ, դ) պատրաստել առաջարկություններ հանձնաժողովի կազմում փոփոխություններ մտցնելու մասին:

Ռազմավարության իրականացման հիմնական գործիք են ամենամյա գործնական պլանները, որոնք կմշակեն իրականացնող ճյուղային գերատեսչությունները: Ռազմավարությունը կիրականացվի պետական բյուջեի ֆինանսավորմամբ, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների և գործընկեր երկրների ֆինանսական աջակցությամբ: Ռազմավարությանը գոյություն ունեցող ռեսուրսների համապատասխանությունը ապահովելու համար իրականացնող գերատեսչություններին ռազմավարության նպատակները և խնդիրները որոշված են ընդհանուր տեսքով և ընդգրկված կողմերին հնարավորություն է ընձեռվում վերաբաշխել և իրականացնել դրանք տարեկան գործնական պլանի շրջանակներում այն ծավալով, ինչի հնարավորություն նրանց կտան առկա պետական ռեսուրսները և դոնորների օգնությունը: Կառավարական հանձնաժողովի անդամ գերատեսչության նախաձեռնության հիման վրա հնարավոր է ռազմավարությունում փոփոխություններ մտցնել գործող օրենսդրությանը համապատասխան:

Ռազմավարություն իրականացնող հաստատության (գերատեսչության) կազմալուծման, վերացման և/կամ այլ հաստատությունների (գերատեսչությունների) հետ համադրման կամ մի քանի գերատեսչությունների բաժանման դեպքում, ռազմավարության համապատասխան խնդիրների կատարումն ապահովում է նրան իրավափոխարինող հաստատությունը (գերատեսչությունը):

6.2. Ռազմավարության և գործնական պլանի մոնիթորինգ և գնահատում

Ռազմավարության և գործնական պլանի արմատավորման ընթացքի, արդյունավետության և արդյունավետ լինելու մասին տեղեկատվության ստացման, անհրաժեշտ ներխուժումների ժամանակին իրականացման և գնահատման նպատակով կանցկացվի **ռազմավարության մոնիթորինգի և գնահատման գործընթաց**, որի նպատակն է կանոնավորապես հավաքագրել

տեղեկատվությունն ձեռքբերած առաջընթացի և գործնական պլանով սահմանված ակտիվությունների իրականացման հետ կապված խնդիրների արդյունքների մասին:

Մոնիթորինգի համակարգն այնպես է պլանավորված, որ ապահովված լինի հաշվետու լինելու պարտականության բարձր մակարդակը և պատասխանատու գերատեսչությունների կողմից ակտիվությունների իմպլեմենտացիայի գործընթացի արդյունավետությունը: Ռազմավարության տրամաբանական շրջանակի մասում ներկայացված են յուրաքանչյուր ռազմավարական նպատակի և խնդրի գնահատման համար ազդեցության և արդյունքի ինդիկատորները, որոնք հիմնադրված են օբյեկտիվորեն ստուգվող աղբյուրների վրա: Մոնիթորինգի գործընթացում ընդունված տվյալները մշակված և արտացոլված կլինեն ակտիվությունների իրականացման և խնդիրների արդյունքների ինդիկատորների նկատմամբ:

Մոնիթորինգի գործընթացը նախատեսում է պետական գերատեսչություններից ստացված տեղեկատվության, ինչպես նաև ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի և քաղաքացիական հասարակության այլ ակտորների կողմից ռազմավարության/գործնական պլանի իրականացման առնչությամբ պատրաստված մոնիթորինգի արդյունքների, հետազոտությունների և հանձնարարականների վերլուծություն:

Մոնիթորինգի գործընթացը, որը կկատարվի գործնական պլանի իմպլեմենտացիային զուգահեռաբար, կհամակարգի Հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը:

Գործնական պլանի իրականացման համար պատասխանատու գերատեսչությունները և մարմինները ապահովում են տեղեկատվության և ճշգրիտ տվյալների ձեռք բերումը, դրանց դասակարգային և ըստ կատեգորիաների բաշխումը, որի հիման վրա էլ վեց ամիսը մեկ կպատրաստեն գործնական պլանով որոշված ակտիվությունների կատարման ստատուս-հաշվետվություններ:

Պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ, պատասխանատու գերատեսչությունների ստատուս-հաշվետվությունների կոնսոլիդացման՝ համախմբման հիման վրա կպատրաստվի երկու փաստաթուղթ. Պրոգրես՝առաջընթաց-հաշվետվություն խնդիրների և արդյունքների ինդիկատորների առնչությամբ և գործնական պլանի կատարման տարեկան հաշվետվություն, որը կառավարական հանձնաժողովին կներկայացվի քննարկման համար և կհրապարակվի պետական նախարարի աշխատակազմի կայք-էջի վրա՝ www.smr.gov.ge: Հաշվետվությունը ներկայացված կլինի նաև ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի և այլ շահագրգռված անձանց ձեռք բերված առաջընթացի մասին իրազեկման նպատակով: Մոնիթորինգի տարեկան հաշվետվությունը նույնպես կարևոր գործիք է կոնկրետ գերատեսչությունների գործունեության արդյունավետության և արդյունավետ լինելու, հիմնական խնդիրների մասին

իրագրելի մասնակցությունը և գործընթացում հնարավոր միջամտման կարիքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Ռազմավարության գնահատումն իրականացվում է նպատակների և ազդեցության ինդիկատորների մակարդակով: Քանի որ ռազմավարությունը հաշվարկված է 10 տարվա ժամկետով, պլանավորված է ռազմավարության երկու միջանկյալ գնահատում, որը կիրականացվի 2024 և 2027 թվականներին, իսկ վերջնական գնահատումը որոշված է ռազմավարության իրականացման ժամանակաշրջանի վերջին՝ 2030 թվականին: Գնահատումները կիրականան արտաքին գնահատման ձևով, անկախ փորձագետների և փորձագետային/հետազոտական կազմակերպությունների կողմից, ինչպես նաև տեղական ոչ կառավարական, միջազգային կազմակերպությունների, փորձագետների և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ակտիվ ընդգրկմամբ:

Կառավարական հանձնաժողովը իրավասու է ընդունել որոշում, թե որ առաջնահերթությունների/նպատակների առնչությամբ, իրականացվեն ռազմավարության միջանկյալ գնահատումներ: Նշված որոշումը հանձնաժողովը կընդունի մոնիթորինգի տարեկան հաշվետվությունների քննարկման հիման վրա, այն բանի համաձայն, թե որ կոնկրետ ուղղությամբ են հատվում մարտահրավերները կամ արտացոլված է բարձր հասարակական հետաքրքրություն:

Յուրաքանչյուր միջանկյալ գնահատման ժամանակ ձեռքբերումների դինամիկայի ուսումնասիրման հետ մեկտեղ կարևոր է իրականացվի ժամանակում փոփոխված հանգամանքների և համատեքստի հաշվառմամբ խնդիրների և տեսլականի հրատապության գնահատում: Միջանկյալ և վերջնական գնահատման գործընթացում մշակված և կիրառված կլինեն չափանիշներ նպատակներին և խնդիրներին համապատասխան: Հաշվետվություններ պատրաստելիս պաշտպանված կլինեն ժամանակին կատարվելու, նպատակային կենտրոնացման, համարժեքության, ընթերցողին կողմնորոշված սկզբունքները: Ռազմավարության իրականացման արդյունքների և ազդեցության մասին տեղեկատվությունը մատչելի կլինի բոլոր շահագրգռված անձանց համար, այդ թվում ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, գիտական շրջանների, մասնավոր սեկտորի ներկայացուցիչների և ոլորտի փորձագետների համար:

Մոնիթորինգի, տարեկան և միջանկյալ գնահատման արդյունքներից ստացած տեղեկատվությունը կհիմնվի ռազմավարությամբ և գործնական պլանով կանխագծված խնդիրների և ակտիվությունների շրջանակներում ձեռք բերված արդյունքների փոխազդեցության համեմատական վերլուծության վրա, ինչը հնարավորություն կտա տեսնել ռազմավարության իմպլեմենտացիայի դինամիկան, կատարել առկա մարտահրավերների նույնականացում: Քաղաքականության զարգացման, դրա արդյունավետ իրականացման և առկա մոտեցումներում փոփոխությունների մտցման նպատակով, պետական նախարարի

აշխատակაცდმჩ კოღმჩგ ზადმადაროქოან ჩმაცლმმნთაგჩაქი გოძრწწაგჩნ მჩაგად აყათააქანათო გერათესაქოქონწერჩ ჰამარ კყათრასოქენ ჰამაყათააქან ჰანდწარარაკანწერ ზოქოქონწერჩ წაქაადმწოქოან ჰამარ:

წადმადაროქოან ქერწნაკან გწაჰათმან წყათაკლ დმექ რერად არექონწერჩ ჯაქომრ, ჰასარაკოქოან აოქნ ჰაქქეტოქოან აყაჰოქომრ ჸ ჰეტოგა თარჩწერჩ ზადმადაროქოან მქაკმან ჰამარ ჰჩმქჩ აყათრასოქომწ:

წადმადაროქოან გოძწნაკან აქანჩ კათარმან ჸ მწჩქოქოქინგჩ ამწწამქა ჰაქქეტოქოქონწერჩ წაქათმამარ აქთაკან წაქარარჩ აქაათაკაცდმჩ კოღმჩგ კყათრასოქენ ზადმადაროქოან ქრაკანაგმან მჩქანქაქ ჸ ჲერაქაქჩქ გწაჰათმან ქასთაქოქერ, ოქოქ მათქელჩ კქწწწ აქთაკან წაქარარჩ აქაათაკაცდმჩ აქაქთოწნაკან კაქქ-ქქჩ ქრამ` www.smr.gov.ge.

6.3. შწჩქოქოქინგჩ ჸ გწაჰათმან ოქაგოქგ

შწჩქოქოქინგჩ გწაჰათმან დწ	წაქქეტოქოქონწერჩ ამწაქჩქ/აყარქ- რაკანოქოან	გწაჰათმან/ თქაკწწერჩ ჰაქარაგოქომ ქრაკანაგმოქ	წათააქა- წათო გერათესაქოქონ	
სარქკან ჰაქქეტოქოქონ	2022 ოქაკანჩ ქოამაქაქ	I	ყათაქარაკან ჰანდწაქოქოქ	
	2023 ოქაკანჩ ქოამაქაქ	I	ჯაქთმგმან	
	2024 ოქაკანჩ ქოამაქაქ	I	ქრაკანაგმან ქრაკანაგმან	
	2025 ოქაკანჩ ქოამაქაქ	I	წაქარარჩ ყქთაკან	
	2026 ოქაკანჩ ქოამაქაქ	I	აქაათაკაცდ	
	2027 ოქაკანჩ ქოამაქაქ	I		
				ყათაქარაკან ჰანდწაქოქოქ
				წაქარარჩ ყქთაკან

	2028 թվականի եռամսյակ	I		
	2029 թվականի եռամսյակ	I		
	2030 թվականի եռամսյակ	I		
Միջանկյալ գնահատում	2024 թվականի եռամսյակ	I	Անկախ փորձագետներ	Կառավարական հանձնաժողով
	2027 թվականի եռամսյակ	I		
Վերջնական գնահատում	2031 թվականի եռամսյակ	I	Անկախ փորձագետներ	Կառավարական հանձնաժողով

6.4. Ռազմավարության իրականացման ռիսկ-գործոններ

Ռազմավարության իրականացմանը խոչընդոտող **ռիսկ-գործոններ** կարելի է դիտարկել միջազգային/տարածաշրջանային քաղաքականության և տնտեսական անկայունությունը և այն ֆորս-մաժորային իրավիճակը, ինչը բացասաբար կարտացոլվի երկրի ֆինանսատնտեսական իրավիճակի վրա: Թեև մոտ անցյալը վկայում է, որ երկրում, թե նրա սահմաններից դուրս զարգացած բացասական երևույթները/գործընթացները չեն խոչընդոտել կամ լուրջ վտանգ չեն ստեղծել քաղաքացիական իրավահավասարության և ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացմանը:

Նույնպիսի կարևոր ռիսկ-գործոնը, որը կողմնակալությամբ և կոնկրետորեն կարող ենք ընդգծել, դա COVID-19-ի համաճարակի պատճառով ստեղծված ծանր համավարակային իրավիճակը և դրա տարածման կանխարգելման նպատակով հաստատված սահմանափակումներն են այնպես, ինչպես համաճարակի բացասական արդյունքները տնտեսական և սոցիալական տեսանկյունից:

Կանխագուշակված ռիսկերի վերլուծության հիման վրա գործնական պլանում դիտարկված են ինչպես բազիսային ակտիվությունները, այնպես էլ համաճարակի պայմաններում տնտեսական զարգացման թերահավատության սցենարին ի պատասխան, բնակչության

իրագրելի ման և սոցիալ-տնտեսական աջակցության ակտիվությունները: Համապատասխանաբար նշված գործնական պլանի հիման վրա տեղի կունենա պետական բյուջեի նախագծի կազմում և պլանավորված միջոցառումների իրականացում առանց խափանումների:

Ռիսկերի կրճատման և արդյունավետ կառավարման նպատակով պարբերաբար կանցկացվեն ռազմավարության իրականացմանը և կատարման վերլուծությանը միացած գերատեսչությունների որակավորման բարձրացման միջոցառումներ, այդ թվում անալիտիկ կարողությունների զարգացման տեսանկյունից: